Արահետ

RIMA KHACHATRYAN

THE PATHWAY

РИМА ХАЧАТРЯН

ТРОПА

YEREVAN | ЕРЕВАН
2023

Ռիմա Խաչատրյան

Արահետ

ԵՐԵՎԱՆ
2023

ՀՏԴ 377:82-94
ԳՄԴ 74.4
Խ 282

Խ 282 Խաչատրյան Ռիմա
Արահետ / Ռ. Խաչատրյան.- Եր.: Newmag, 2023.- 142 էջ:

«Արահետ» ժողովածուն ՀՀ վաստակավոր մանկավարժ Ռիմա Խաչատրյանի կյանքի առանձին դրվագներն ու առօրեական պահերը ներկայացնող պատումների շարք է պատկերաշարով: Առանձին դրվագները փոխանցում են ժամանակի շունչը, գրավիչ պարզությամբ ներկայացնում ժամանակակիցների կենցաղի մանրամասները, առօրյա կյանքի տեսարաններով բացահայտում մարդկանց անմիջական ու անկեղծ հարաբերությունները: Գրքում օգտագործված են Ռիմա Խաչատրյանի անձնական արխիվի նյութերը, փաստաթղթերն ու լուսանկարները:

ՀՏԴ 377:82-94
ԳՄԴ 74.4

ISBN 978-9939-884-95-0

Արահետ © Ռիմա Խաչատրյան , «Նյու Մեգ» ՍՊԸ
Շապիկին՝ Ռ. Խաչատրյանի դիմանկարը, հեղինակ՝ Վյաչեսլավ Հերասիմովիչ
Image on the cover: R. Khachatryan, author: Vyacheslav Herasymovych

Այս գրքի հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

Ընտրեք կյանքի ձեր արահետը
և անշեղորեն քայլեք այդ արահետով...

Ռիմա Խաչատրյան

Իմաստուն, բարի, ուժեղ բնավորության տեր Ռիմա Խաչատրյանի մեջ խտացված են Ուսուցչի լավագույն հատկանիշները: Նա դաստիարակվել է հանդուրժողականության, մարդասիրության ու գթասրտության սկզբունքներով և բոլորից լավ է մարմնավորում այդ սկզբունքները:

Եվգենի Սաֆրոնով

Նկարիչ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր

Ռիմա Խաչատրյանի մանկավարժական հայեցակարգի հիմքում ժողովրդավարության հանդեպ նրա անսահման հավատն է: Իր կրթական պրակտիկայում նա մշտապես քարոզում է ժողովրդավարական գաղափարներն ու սկզբունքները: Ազդեցիկ արհմիութենական գործչի համար դպրոցը և քաղաքացիական հասարակությունը կրթության և աշխարհընկալման հիմնարար տարրեր են:

Tert.am

Մայիսի 28, 2017

Մայրը նրան փոխանցեց Մերձավոր Արևելքի օգնության կազմակերպության մանկատանը ձեռք բերած առաքինությունները՝ ազատատենչություն, հանդուրժողականություն, գթասրտություն: «Կրթություն ունենալը նաև առաքելություն է». մոր այս փիլիսոփայությունը դարձավ տիկին Խաչատրյանի կյանքի սկզբունքը:

Tert.am

Ապրիլի 3, 2018

[Նրա հեղինակած] երկու դասագրքերն էլ [բժշկական] քոլեջների կրթական ծրագրերի հիմնական ուսումնական ձեռնարկներն են: Դրանց առավելությունն ուսումնառության ընթացքի շարունակականությունն է և բովանդակությունը ներկայացնելու ուսանողակենտրոն մոտեցումը:

News.am
Մայիսի 11, 2020

Ռիմա Խաչատրյանը վստահ էր, որ կրթությունը չպետք է սահմանափակվի հմտություններ ձեռք բերելով, այլ պետք է հանգեցնի սեփական ներուժի իրացմանը և ընդունակությունները կիրառելու կարողության զարգացմանը:

Aysor.am
Ապրիլի 20, 2021

Նրա խիղճն ավելին էր, քան մարդը պետք է ունենա: Նրա գթասրտությունը սահման չէր ճանաչում: Պատրաստ էր բոլորին օգնել ամեն ինչով:

Ռիմա Խաչատրյան, Չպատմված պատմություն
Երևան, 2020, էջ 59

Նա միշտ գիտեր, թե երբ պետք է կանգ առնել: Ամեն ինչում չափավոր էր: Հումորի զգացում ուներ: Այս ամենը նրան փոխանցվել էր մայրական կաթի հետ: Նա նաև լռել գիտեր: Նա լավ գիտեր լռության գինը:

Ռիմա Խաչատրյան, Գաղթականի աղջիկը
Լոնդոն, 2021, էջ 38

Ժամանակները երևի գույն ու հոտ ունեն: Դժվար է, իհարկե, այս պնդումն անխոցելի համարել. համենայն դեպս, «Արահետ» ժողովածուն խորհրդային տարիների համն ու հոտը, կյանքն ու գույնը բացում է այնպես, ինչպես այն կար: Մարդկանց հարաբերությունները, կերպարները, խոսք ու զրույցը, հումորն ու թախիծն առավել քան իրական են այստեղ՝ ժամանակը կտրած-անցած, բայց թարմ հուշի պես:

Խոսուն պատմություններն ընթերցողին արագ կտեղափոխեն տարբեր տասնամյակներ ու երկրներ, պատկերները, տեղանքը, հարաբերություններն արագ կփոխվեն էջից էջ, բայց հաստատուն կմնա տանող գիծը՝ մարդկանց մարդու պես վերաբերվող մարդը:

Ռիմա Խաչատրյանը խորհրդային մտավորականության այն դասական ներկայացուցիչներից էր, որոնք ուղեցույց էին շատերի համար, ու որոնցից շատերը հետագայում անկախ Հայաստանում էլ մնացին մարդկային հարաբերությունների հիմնօրինակ:

Վաստակավոր մանկավարժի կյանքի առանձին դրվագները ներկայացնող այս շարքում յուրաքանչյուր ոք կարող է գտնել իրեն, իր հարազատներին, վերականգնել սեփական կյանքի վերհուշը:

Գուցե նեղսրտեք Բարեղամ պապի խիստ օրինապաշտությունից, լիաթոք ծիծաղեք Չերչիլի արձանի «պաշարյալների» զավեշտալի վիճակի վրա կամ հուզվեք իրարից թաքուն մարտի 8-ին տատին այցելող քույր ու եղբոր պատմությունից, գուցե՝ ոչ, բայց շարքն ավարտելուց հետո ձեզ անպայման կհամակի շրջապատի մարդկանց հանդեպ ուշադիր լինելու բուռն ցանկությունը:

Տիկին Ռիման իրականում էլ մարդ-մագնիս էր: Նա միշտ ու ամենուր ձգում, իրար գլխի էր հավաքում մարդկանց: Ապշել կարելի էր, թե ինչպես է քո տեսած ամենահամեստ, ամենաչափած-ձևած, քչախոս ու չափավոր մարդկանցից մեկը բոլոր աղմկաշատ հավաքների կենտրոնը դառնում:

Բացատրությունը երևի թե ամենապարզն է. մարդիկ միշտ և բոլոր ժամանակներում ձգտել են դեպի լավը, դեպի մարդկայինը, դեպի լուսավորը:

Այս ժողովածուն մեկ մարդու պատմություն է, բայց կարող է շատերինը լինել կամ վարակիչ լինել շատերի համար: Վազքի, աղմուկի, մեծ հրմըշտոցի մեր օրերում մենք հաճախ ենք մոռանում հյուր գնալու, հյուր գնալիս էլ անպայման հարևան-ծանոթների տուն սուրճի մտնելու ավանդույթների

մասին կամ այն մասին, թե ինչ երկար ու համով պատմություն կար լոտոյի սեղանի շուրջ քարտը լրացրած տատիկի կանչի մեջ. «Աչի, մու, ես պրծա»...

Ժողովածուն մեզ տանում է հետ՝ դեպի ապրված կյանք, որ ապրելիքում էլ շատ չհեռանանք մեր իրական ես-ից:

Սևակ Հալայան

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի փորձագետ

Բովանդակություն

Ներածություն 13

Ոսկեզօծ սկուտեղը կամ Մարտի 8-ը՝ ծպտյալ 15

Կոնդը, Բանվորական մատակարարման բաժնի
պահեստն ու սև խավիարը 19

«Կարգին կոֆեն» ու Խաթունարխի «տնօրինեքը» 35

Արեգնազի «շաքարն»
ու հարսնաքույր Թագուշի «տենդը» 43

Օտվոցկի հայությունն ու Գոհարի Opel-ը 51

Չերչիլի արձանի «պաշարյալները» 57

Հազարամյա քաղաքի պերճանքն ու թշվառությունը 61

Կոնդեցի քույրերի ողբն ու Phonak լսողական սարքը 69

Աչքերի վիրահատությունն
ու «Քյոնիգսհոֆի» մետրդոտելի զարմանքը 73

Կոպենհագենի ջրահարսն
ու Հյուսիսային ծովի փոթորիկը 79

Կենսագրություն 85

Գրքում հիշատակված անձինք 95

Գրքում հիշատակված տեղանուններ 99

Ներածություն

Հյուսիսային պողոտան Երևանի երկու գլխավոր հրապարակները՝ Ազատության և Հանրապետության, անկյունագծով միմյանց կապող գլխավոր հետիոտնային անցուղին է: Պողոտայի կառուցման գաղափարին Ալեքսանդր Թամանյանն անդրադարձել է իր մշակած՝ Երևանի առաջին գլխավոր հատակագծում, 1924 թվականին:

Պողոտան մշտապես մարդաշատ է, հատկապես երեկոյան: Այստեղ կարելի է տեսնել և՛ երևանցիների, և՛ բազմաթիվ զբոսաշրջիկների: Ու, քանի որ Հյուսիսային պողոտան միայն հետիոտնային է, դրան հարող երկու տրանսպորտային փողոցներում՝ Տերյան և Հին երևանցու, մշտապես խցանումներ են:

Առանձնապես ծանրաբեռնված է Հին երևանցու փողոցը՝ մայրաքաղաքի ամենակարճ, ամենաբանուկ ու աղմկոտ փողոցներից մեկը: Այն սկսվում է Պուշկինի փողոցից, հատում Հյուսիսային պողոտան, Տերյան փողոցն ու ավարտվում է Եզնիկ Կողբացու փողոցի հետ հատման կետում՝ Խուլ ու համրերի մշակույթի կենտրոնի մոտ, որի հակառակ կողմի բակում էլ բացվում էին Լենինի 42 շենքի մուտքերը...

Հին երևանցու փողոցը Երևանի հնագույն փողոցներից է: 19-րդ դարում այն կոչվել է Սադովայա, 20-րդ դարում՝ Թելմանի, ապա՝ Կամոյի, հետո՝ Լալայանց:

Երեկոյան այստեղ ասեղ գցելու տեղ չկա: Ավտոկայանատեղիների «նայողների» հրահանգները, կայանող վարորդների գոռգոռոցը, շրջանցող մեքենաների հռնդյունն ու ձայնային ազդանշանները, մեքենաների նվագարկիչներից ինչող ռաբիս երգերն ու շրջիկ երաժիշտների նվագարանների խայտաբղետ հնչյունները, միախառնվելով բացօթյա սրճարանների

հաճախորդների ու փողոցի անցորդների խոսակցության գվվոցին, մի աներևակայելի աղմուկ ու խառնաշփոթ են ստեղծում՝ իսկական խեն-թանոց...

Հենց այստեղ էլ, Հյուսիսային պողոտայի 5-րդ շենքի՝ Հին երևանցու փո-ղոցին նայող մասնաշենքում 2012-2020 թթ. ապրել է ՀՀ վաստակավոր մանկավարժ[1] Ռիմա Խաչատրյանը:

[1] ՀՀ վաստակավոր մանկավարժ - ՀՀ պատվավոր կոչումը սահմանվել է 2002-ին, վերասահման-վել է 2004-ին, կրկին վերասահմանվել 2014-ին: Շնորհվում է ուսուցիչներին, մանկավարժներին և դասախոսներին՝ մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության գործում ձեռք բերած նշա-նակալի հաջողությունների և ակնառու վաստակի համար: ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն՝ կոչումը շնորհում է ՀՀ Նախագահը: (Ծանոթագրությունները՝ հեղինակի):

Ոսկեզօծ սկուտեղը կամ Մարտի 8-ը՝ ծպտյալ

Տիկին Ռիման անսահման նվիրված էր եղբոր՝ Հրաչիկի ընտանիքին: Նրա զավակների համար հոգի էր տալիս, ապրում էր նրանց հոգսերով ու խնդիրներով:

1971 թվականի ապրիլն էր: Տիկին Ռիմայի ավագ եղբայրը՝ Հրաչիկը, անսպասելիորեն բաժանվեց կնոջից: Ավելի ճիշտ՝ կինը՝ Թամարան, մի օր վեր կացավ, թե՝ մի քանի օրով գնում եմ մերոնց տուն: Երեխաներին վերցրեց ու գնաց Փարաքար՝ եղբոր տուն: Գնաց ու չվերադարձավ: Մի քանի օր անց լուր էր տվել, թե՝ ես բաժանվում եմ:

Հրաչիկն էլ թե՝ բաժանվում է, թող բաժանվի, ես չեմ գնա, չեմ խնդրի, որ վերադառնա: Հրաչիկը շատ հպարտ ու մի քիչ էլ սարթ բնավորություն ուներ, պատվի ու արժանապատվության հարցում անզիջում էր ու շատ համառ:

Մայրն ու քույրը Հրաչիկին զօրուգիշեր համոզում էին գնալ Թամարայի հետևից, նրան տուն վերադարձնել, բայց Հրաչիկն անդրդվելի էր. «Ինչպես գնացել է, էդպես էլ թող հետ գա»:

Թամարան էլ սարթ բնավորություն ուներ, շուտ էր բորբոքվում, բայց և հեշտ կողի չէր ընկնում: Նա էլ, իր հերթին, թե՝ որ էդպես է, ես էլ կարգելեմ, որ երեխեքին տեսնի:

Ասածն արած էր. իրար ջիգր[1] անելով՝ 15 տարվա համատեղ կյանքից հետո բաժանվեցին: Բայց, դե նրանց զավակները՝ 14-ամյա Գոհարն ու 8-ամյա Գեղամը շատ էին կապված թե՛ Ռիմիկ հորաքրոջ (տիկին Ռիմային մտերիմները Ռիմիկ էին ասում), թե՛ Սիրուշ տատի (տիկին Ռիմայի մորը՝ Սիրանուշ տատին, նեղ շրջապատում Սիրուշ տատի էին ասում) հետ:

Նրանց, հատկապես Գոհարին, որն արդեն այդ տարիքում չափազանց ինքնուրույն էր, ըմբոստ ու վճռական, հեշտ չէր «կտրել» հոր հարազատներից:

Բացի այդ, թե՛ տիկին Ռիման, թե՛ Սիրուշ տատը, թե՛ նրանց բարեկամներն ու ազգականները, շատ կապված էին թե՛ Թամարայի եղբոր՝ խնամի Գարուշի, թե՛ նրա տիկնոջ՝ տիկին Ռիտայի, թե՛ նրանց ազգուտակի հետ, ու Հրաչիկի և Թամարայի բաժանումն ամենևին էլ չազդեց նրանց բարեկամության վրա: Նրանք առաջվա պես շարունակում էին իրար տուն հյուր գնալ, իրար զանգել, իրարով մշտապես հետաքրքրվել, իրար նեղ օրի հասնել:

Նրանք բոլորն էլ թաքուն հույս էին փայփայում, որ Թամարան ու Հրաչիկը մի օր կհաշտվեն. դե, ամուսիններ են, կկռվեն, քեն կպահեն ու կներեն միմյանց: Բայց, ավա՜ղ:

...Մի որոշ ժամանակ էսպես անհայտ ու անորոշ առօրյայով ապրելուց հետո եկավ Մարտի 8-ը: Կանանց միջազգային օրը խորհրդային երկրում մի առանձին ոգևորությամբ էին նշում: Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձից, Հաղթանակի օրից ու մայիսմեկյան տոներից հետո այն պետական ամենակարևոր տոնն էր համարվում:

[1] Ջիգր - ոխ, քեն, ջիգր անել - քեն քշել, գործել ի հեճուկս

Ժողովրդի մեջ տոնն այնքան էր արմատավորվել, որ մարդիկ ամեն տարի ընտանեկան ու ընկերական միջավայրում պարտադիր նշում էին այն Ամանորի ու սեփական ծննդյան օրվա պես:

Ու ահա Մարտի 8-ի նախօրեի առավոտյան մեկ էլ Գոհարը թակեց Հրաչիկենց՝ Լենինի 42-րդ շենքի 4-րդ հարկի կոմունալ բնակարանի դուռը: Սիրուշ տատը տանը մենակ էր: Շատ ուրախացավ՝ ավագ թոռնիկին տեսնելով դռան շեմին: Անմիջապես ներս տարավ, իրար խառնվեց, էս ու էն կողմ ընկավ՝ նրան հյուրասիրելու համար:

Պարզվեց՝ Գոհարը մորից թաքուն եկել էր տատիկի Մարտի 8-ը շնորհավորելու: Մեխակներ էր բերել: Էն տարիներին մեխակները շատ հարգի էին, ընդունված էր սիրելի մարդկանց մեխակ նվիրելը:

Տատ ու թոռ մի լավ շփվեցին միմյանց հետ: Տատը, իհարկե, հազիվ էր զսպում արցունքները, անընդհատ հարցուփորձ էր անում Գեղամի, Թամարայի մասին. որտեղ են ապրում, ինչ են ուտում, հո անոթի չե՞ն մնում, դասերն ինչպե՞ս են, ու էսպես շարունակ:

Սիրուշ տատիկին հրաժեշտ տալիս՝ Գոհարը նրան մեկ անգամ ևս հիշեցրեց (թեև դրա կարիքն ամենևին չկար, Սիրանուշ տատն ամեն ինչ լավ հասկանում էր), որ մորից ու եղբորից թաքուն է եկել, ու շատ կարևոր է, որ հանկարծ Գեղամն այդ մասին չիմանա, թե չէ երեխա է, ո՞վ իմանա, հանկարծ լեզվից կթռցնի, ու տանն աղմուկ կբարձրանա:

Սիրանուշ տատը, իհարկե, խոստացավ գաղտնի պահել ու, արտասվելով հրաժեշտ տալով թոռնուհուն, ճանապարհեց դեպի դուռը:

Մի երկու ժամ չանցած դարձյալ դուռը թակեցին: Ցերեկվա այս ժամին սովորաբար հյուրեր չէին լինում: Սիրանուշ տատը դուռը բացեց ու զարմանքից քարացավ. շեմին կանգնած էր Գեղամը, որ վերջին դասից փախել ու եկել էր՝ տատիկի Մարտի 8-ը շնորհավորելու:

Հետն էլ նվեր էր բերել՝ մետաղե, ոսկեզօծ, շրջանաձև սկուտեղ: Շատ գեղեցիկ էր: Կենտրոնում պատկերված էր «Լենին» ատոմային սառցահատն Արկտիկայի սառույցների մեջ, շուրջն էլ՝ երեք շարք զարդանախշեր:

— Գեղամ ջան, դասից ես եկել, սոված կլինես,– բացականչեց Սիրանուշ տատն ու գործի անցավ: Էլի նույն հարցերը, էլի նույն խրատները՝ խելոք կլինես, մամային կլսես, դասերը բաց չթողնես:

Գեղամն էլ իր հերթին, Սիրուշ տատիկին հրաժեշտ տալիս, հիշեցրեց, որ մորից ու քրոջից թաքուն է եկել, ու շատ կարևոր է, որ հանկարծ Գոհարն այդ մասին չիմանա, թե չէ աղջիկ է, ինչ իմանաս, մեկ էլ բերանից կթռցնի, ու տանը կռիվ կընկնի...

Էսպես ապրեցին վեց տարի, մինչև Հրաչիկի անսպասելի ու անժամանակ մահն ամեն ինչ փոխեց:

1977 թվականի հոկտեմբերյան մի օր Հրաչիկն աշխատանքից շուտ տուն եկավ: Վատ էր: Պառկեց ու այլևս վեր կենալ չկարողացավ: Նոյեմբերի 19-ին մահացավ 44 տարին նոր բոլորած:

Վիշտը ցնցեց բոլորին, ստիպեց մոռանալ անցած-գնացածն ու կրկին միավորվել: Մեծ ընտանիքի երեք սերունդները նորից իրար հետ էին թե՛ ուրախության, թե՛ տխրության պահերին: Եթե մի շաբաթ իրար չէին տեսնում, անհանգստանում էին: Գոհարն ու Գեղամն էլ գրեթե ամեն օր Սիրուշ տատիկի տանն էին: Ռիմիկ հորաքույրն ու Սիրուշ տատն էլ առանց նրանց ոչինչ չէին անում:

Կոնդը, Բանվորական մատակարարման բաժնի[1] պահեստն ու սև խավիարը

Երևանի սրտում մի թաղ կա՝ իրար վրա հենված, կիսախարխուլ տներով, նախորդ դարի դարպասներով ու չափազանց նեղ, ծուռումուռ փողոցներով. Կոնդը:

Ժամանակին Կարեն Դեմիրճյանը, որն ինքն էլ ծնունդով կոնդեցի էր, նպատակ ուներ Կոնդը հանգստի, զբոսաշրջության ու ժամանցի օջախ դարձնել՝ պահպանելով ազգային կոլորիտը: Նախատեսվում էր ուղղանկյուն այգու պարագծով վերականգնել մեկ-երկու հարկ ունեցող դեռ պահպանված հին տները, դրանք օգտագործել հայկական խոհանոցի ճաշատեսակներով ռեստորանների, սրճարանների, թեյարանների, նաև գեղանկարչական ակումբների համար: Զբոսայգում նկարիչները կարող էին նկարել, ցուցադրել իրենց նկարները: Ցավոք, Կոնդը Մինմարտր չդարձավ, բայց հեքիաթը մնաց:

---

[1] Отдел рабочего снабжения (ОРС) – պետական մանրածախ առևտրի կազմակերպությունը հիմնվել է 1932-ին՝ բանվորների քարտային սպասարկումը բարելավելու համար:

Հետագա տասնամյակներում թաղամասի տարածքը փոքրացավ ու հիմա 16 հեկտար է: Սահմաններն անցնում են Պարոնյան, Լեո, Սարյան փողոցներով, դեպի Կոմպոզիտորների տուն ու Ֆրիկի փողոց ձգվող աստիճաններով, ապա Պռոշյան փողոցով՝ ներառելով Սուրբ Հովհաննես եկեղեցին: Կոնդի դարպասները ժամանակին մեկը մյուսից վառ գույնի են եղել: Հիմա գույները խամրել են, բայց յուրաքանչյուր տան դուռ ու դարպաս հնամենի պատմության կենդանի վկան են:

Այս թաղում մարդիկ ապրում էին սերնդեսերունդ, ինչը Երևանում արդեն հազվագյուտ երևույթ է: Ու հենց այդ պատճառով էլ Կոնդը հայտնի էր իր կոլորիտային բնակիչներով: Օրինակ՝ Օխոն, Ճենջոն, Բի-բի-սի Սինամը, պիվի բուդկի Արտեմ բիձեն ու մոմ թափող Նուբար տատը հայտնի էին իրենց արտասովոր կենսակերպով:

Կոնդ բառացի նշանակում է երկարաձիգ կամ բոլորակ բլուր: Կոնդի դիքը[2] մի ժամանակ կոչվել է Ցարսկի: Ըստ կոնդեցիների՝ այդ դիքի վրա գտնըվող տանը մի քանի օր ապրել է Նիկոլայ ցարը[3], երբ եկել է Արարատը տեսնելու, որը, սակայն, մշուշով էր պատված այդ օրերին:

Առաջին հայացքից թվում է, թե անհնար են մեքենայով Կոնդ մտնելն ու առավել ևս այնտեղից դուրս գալը: Հետիոտները, որոշ փողոցներում մեքենային զիջելիս, պետք է ծեփվեն պատին՝ անիվների տակ չհայտնվելու համար:

Կոնդի նեղ փողոցների մասին շատ պատումներ կան: Օրինակ՝ պատմում են, որ բնիկ կոնդեցի Վորոշիլովը, որին թաղում Վորոշ էին ասում, մի անգամ սխալ կայանած մեքենայի պատճառով փակվել ու մնացել է Ռուսթավելու փողոցի վրա գտնվող իր տան զուգարանում, քանի որ զուգարանի դուռը բացվում էր փողոցի վրա:

---

[2] Դիք - բարձունք, վերելք, վերընթաց ճանապարհ

[3] Նիկոլայ 1-ին (1796-1855) կայսրը 1837-ին ուխտագնացություն է կատարել դեպի Երևան՝ բիբլիական Արարատը տեսնելու համար:

Կոնդի հարսները կոփված էին՝ սովոր էին ջուր կրելուն ու դրսում տարվա բոլոր եղանակներին ափսեներ լվանալուն: Առանձին սանհանգույցն ու լոգարանը, որոնցից օգտվում են բակի ամենաքիչը հինգ հարևան, Կոնդում այսօր էլ ճոխություն են համարվում:

Կոնդում էր ապրում տիկին Ռիմայի մորաքրոջ՝ Սաթեն տատի ընտանիքը, որի հետ տիկին Ռիման շատ ջերմ հարաբերություններ ուներ: Նրանց տունը 18-րդ դարի միհարկանի կառույց էր: Պատերը, որոնք շարված էին հարդախառը, հում աղյուսից, գրեթե մեկ մետր հաստություն ունեին: Հենց դա էր պատճառը, որ ներքին պատի մեջ (պատի տակ Սաթեն տատի մահճակալն էր) խորը խորշ կար:

Հայտնի չէ, թե որերորդ դարում ու տան որ մի տերն էր այդ խորշը բացել, բայց Սաթեն տատի ամուսինը՝ Ահարոն պապը, հնարը գտել էր: Նա դատարկ տարածքում դարակներ էր դրել, ու այն դարձել էր Սաթեն տատի պուճախը[4]:

Ու, քանի որ այն տեղակայված էր ներքին պատի խորշում, որտեղ արևի ճառագայթները երբեք չէին հասնում, դրանում ջերմաստիճանային ռեժիմն ամառ-ձմեռ միշտ պաղ էր, ինչը Սաթեն տատին հնարավորություն էր տալիս այդտեղ պահել իր այնոյինը[5]: Ինչ համադամ խորտիկներ կարելի էր գտնել այդ «շկաֆում»՝ չիր ու չամիչ, կոնֆետ, սուջուխ, պահածո:

Կրտսեր եղբորը՝ Հրաչիկին, կորցնելուց հետո տիկին Ռիման շատ մտերմացել էր Սաթեն տատի ավագ որդու՝ Ժորայի հետ (իսկական անունը Գևորգ էր, բայց բոլորը նրան Ժորա էին ասում):

Լուրջ որոշումներ կայացնելիս՝ Ռիմիկն անպայման խորհրդակցում էր Ժորայի հետ, հատուկ առիթների ժամանակ մեկն առանց մյուսի սեղան չէր նստում: Առանց առիթի էլ մշտապես իրար հյուր էին գնում՝ երեկոյան ընթրիքի: Այդ ընթրիքները, որ առնվազն շաբաթը մեկ անգամ պարտադիր

[4] Պուճախ - անկյուն

[5] Այնոյին - զանազան, մանր-մունր բաներ

պիտի կազմակերպվեին, հաճախ վերածվում էին իսկական գինարբուքի ու տևում մինչև ուշ գիշեր:

Ժորա մորեղբոր տանը Беларусь մակնիշի դաշնամուր կար, որն այն տարիներին իսկական ճոխություն էր: Երեկույթները հյուրերի խնդրանքով երբեմն դաշնամուր նվագելով «ծաղկեցնում էին» Ժորա մորեղբոր դուստրերը, ավելի հաճախ կրտսերը՝ Գայանեն, առավել հազվադեպ՝ ավագը՝ Նարինեն: Երբեմն ընթրիքն ուղեկցվում էր այն տարիներին շատ տարածված լոտո խաղալով: Հավաքվում էին մեծ ու փոքր, նստում սեղանի շուրջը: Հանում էին լոտոյի խաղաթղթերը, կարմիր լոբու չորացած հատիկները, լոտոյի՝ 90 քարերով լցված, սպիտակ ամրքանից կարված, խունացած տոպրակն ու սկսում:

— Իննսուն՝ մեծ պապ, մեկ՝ խաբարն էկավ, քսանմեկ…

Մեկ էլ հանկարծ լսվում էր Սաթեն տատի ծղրտոցը.

— Աչի, մու, ես պրծա:

Պարզվում էր, սակայն, որ Սաթեն տատը խաղը շահել էր մի քանի քայլ առաջ, բայց նոր էր նկատել: Ասել է թե՝ նա չէր զգուշացրել, որ «մի քարի է սպասում», ինչը խաղի կանոնների կոպիտ խախտում էր համարվում: Ու Սաթեն տատի հաղթանակը «չէր գրանցվում»: Սաթեն տատն էլ ամեն անգամ ծիծաղելով նեղսրտում էր.

— Էհ, ղալբ[6] եք, ղալբ…

Սաթեն տատը պարզ ու շիտակ վանեցի էր: Գրի սևն ու սպիտակը հազիվ էր ջոկում (ի տարբերություն քրոջ՝ Ռիմիկի մոր, որն Ամերկոմի[7] որբանոցում կրթություն էր ստացել, Սաթեն տատը միայն հայրենի

[6] Ղալբ – խարդախ

[7] Ամերկոմ – Մերձավոր Արևելքում ամերիկյան նպաստամատույց կոմիտե (American Committee for Relief in the Near East): Ստեղծվել է 1918-ին, Մերձավոր Արևելքի երկրների՝ պատերազմից տուժած բնակչությանն օգնելու նպատակով: Հայաստանում գործել է 1919-1931 թթ.:

Անգղ գյուղում տարրական դպրոց էր գնացել, գաղթից հետո էլ կըրթությունը չէր շարունակել): Խոսում էր առօրեական հայերեն: Հակառակի պես նրա տալն ու տեգրը (ամուսինը վաղուց էր մահացել) նույնիսկ կենցաղում փորձում էին գրական հայերեն խոսել:

Այն տարիներին հայ հասարակական էլիտայում նորաձև էր ռուսերեն (ավելի հաճախ՝ կիսատ-պռատ ռուսերեն) հաղորդակցվելը: Ի հակադրություն այս «նորաձևության»՝ ձևավորվել էր հասարակության մի այլ շերտ, որն առօրյայում ռուսերեն խոսելը համարում էր քաղքենություն և դրան հակադրում էր խիստ գրական շփումը: Սրանք երկու ծայրահեղություններ էին խորհրդահայ հասարակության մեջ, որոնց «բախումները» հաճախ զավեշտի էին վերածվում:

Օրինակ՝ մի անգամ Սաթեն տատի տալը՝ Սիրուն հորաքույրը, հյուրընկալվելով Կոնդում, պատմել էր, թե որքան անտանելի է օրը մի քանի անգամ յոթերորդ հարկ բարձրանալն առանց վերելակի: «Քանի օր է, մեր վերելակը չի աշխատում, ոտքով ենք բարձրանում յոթերորդ հարկ, կոտորվեցինք»,– խոսքը եզրափակել էր Սիրուն հորաքույրը: Սաթեն տատն էլ, որ «վերելակ» բառի իմաստը չէր հասկացել, զարմացած հարցրել էր. «Աչի, մու դուք լիֆտ չունեք»: Սա անեկդոտի էր վերածվել, ու հարազատներով հավաքվելիս միշտ պատմում էին ու քրքջում:

Սաթեն տատը հրաշալի ուտեստներ էր պատրաստում: Բոզբաշը, կոտլետը՝ տապակած կարտոֆիլի հետ, չամիչով քաշովին, ձավարով փլավն այնքան համեղ էին, որ չէիր կշտանում: Ամռան ամիսներին Սաթեն տատն անպայման ձմեռվա թադարուք[8] էր տեսնում: Թթու էր դնում, ղավուրմա[9] ու ժաժիկ[10] պատրաստում, լցնում էր կավե մեծ

[8] Թադարուք – պատրաստություն

[9] Ղավուրմա կամ տհալ – տանը պահածոյացված միս: Հնում մեր նախնիներն ուշ աշնանը պատրաստում էին ղավուրմա, որն օգտագործում էին մինչև գարուն: Տավարի կամ ոչխարի միսը եփում են, քամում, ապա տապակելով կարմրացնում մսաջրի երեսից հավաքած յուղի մեջ, լցնում կավե ամանները, լավ սեղմում և վրան լցնում հալած տաք յուղ (հնում՝ հալած դմակ):

[10] Ժաժիկ – թանը եփելուց և քամելուց հետո ստացվող պանրանման զանգված, թանից պատրաստվող լոռ: Դրան ավելացնում են սոխուկ, լցնում կավե ամանի մեջ, լավ սեղմում:

կճուճների մեջ ու հորում: Զմռանը հանում էր հորից ու որպես դելի-կատես[11] հյուրասիրում հատուկ հյուրերին: Երեխաները (մեծերն էլ նրանցից հետ չէին մնում) անհամբեր սպասում էին Ամանորին, երբ Սաթեն տատի տոնական սեղանին կհայտնվեին աղանձը, երկանքով[12] աղացած այենքով[13] պասուց տոլման, սուջուխն ու ալանին, չիրն ու չամիչը: Իր ճաշացանկի կերակուրների բաղադրատոմսերն ու խոհարարի հմտությունները Սաթեն տատը տարիների ընթացքում փոխանցել էր հարսին՝ Ժորայի կնոջը՝ մորաքույր Ժասմենին (նրա անունը Ջեմմա էր, բայց բոլորը Ժասմեն էին ասում): Բանավոր, իհարկե: Արի ու տես, որ տարիների ընթացքում մորաքույր Ժասմենն այնքան էր հմտացել խոհարարական արվեստում, որ «առաջ էր անցել» սկեսրոջից: Նրանց տնից մշտապես անպակաս անթիվ-անհամար հյուրերի միասնական կարծիքով՝ նրա կերակուրներն ավելի համեղ էին ստացվում:

Այս հանգամանքն էլ հանգիստ չէր տալիս Սաթեն տատին, ու նա երբեմն նեղսրտում էր, թե հարսը եկավ ու, ո՛չ մեկ, ո՛չ երկու, շերեփն իր ձեռքից առավ: Այս փաստը հատկապես Ժորա մորեղբոր սրտով էր, որովհետև ուտելիքի հարցում նա չափազանց բծախնդիր էր: Ամեն ինչ չէր ուտում: Մի անգամ գործի բերումով եղել էր երշիկի ու պանրի արտադրության տեղամասերում ու տեսել արտադրության ընթացքը: Թե հատկապես ի՞նչ էր տեսել Ժորա մորեղբայրը խորհրդային արտադրամասում, ճշտիվ հայտնի չէ, բայց դրանից հետո նա երշիկից ու պանրից հրաժարվել էր:

Ժորա մորեղբայրն աշխատում էր Բանվորական մատակարարման բաժնի պահեստում: Պահեստապետ էր: Անանասն ու բանանը նա արկղերով էր բերում, էլ չասենք կիտրոնի, նարնջի ու մանդարինի մասին, որ նրանց տանը «շան ոտի հետ էին գնում»: Խորհրդային տարի-

[11] Դելիկատես – նրբախորտիկ, նրբահամ կերակուր

[12] Երկանք – ձեռքի աղորիք՝ հատիկներ, աղ և այլն մանրելու համար, բաղկացած է զույգ տափակ, բոլորակ, տաշած քարից:

[13] Այենք – կերակուրների կամ թթվի մեջ ավելացվող զանազան համեմունքներ

ներին չտեսնված ու չլսված այս էկզոտիկ մրգերից մշտապես բաժին էր հասնում (դարձյալ արկղերով) տիկին Ռիմային, ինչից առանձնապես ոգևորված չէր տիկին Ռիմայի մայրը՝ Սիրանուշ տատը: Բանանը նա համարում էր կապիկի կեր և, ընդհանրապես, ամենևին նրա սրտով չէր այն հանգամանքը, որ, մեր գյոզալ[14] ծիրանը, դեղձը, տանձն ու խնձորը թողած, երեխեքն ընկնում էին «էդ ցիտրուսի» հետևից:

Էկզոտիկ մրգերի հետ Սիրանուշ տատն այնուամենայնիվ ինչ-որ կերպ հաշտվում էր, սակայն նույնը չի կարելի ասել սև խավիարի մասին: Սիրանուշ տատը զզվում էր դրանից և այդ վերաբերմունքը ներարկել էր դստերն ու նրա զավակներին: Բայց, արի ու տես, որ Ժորա մորեղբայրը, որը շատ բծախնդիր էր ուտելիքի հարցում, շատ էր սիրում սև խավիար: Հենց սա էր պատճառը, որ Սիրանուշ տատը ստիպված էր իր խոհանոցում (Սիրանուշ տատն ապրում էր դստեր ընտանիքի հետ) հանդուրժել սև խավիարի գոյությունը, բայց մի պայմանով՝ այն պետք է գտնվեր հերմետիկ փակ տարայում:

Սև խավիարն այն տարիներին սարսափելի դեֆիցիտ էր: Մինչև 1960-ականների վերջը սև խավիարը Սովետում կարելի էր խանութից գնել: Կիլոգրամը չորս ռուբլի արժեր (երկրում նվազագույն աշխատավարձը 80 ռուբլի էր): Բայց 70-ականների սկզբին սև խավիարը չքացավ խանութներից ու դարձավ «սև աղվես»: Ավելին, դրա անօրինական վաճառքը հավասարեցված էր վալյուտային հանցագործություններին ու քրեորեն պատժելի էր: Բայց դե, Մոսկվա-Երևան գնացքի ուղեկցորդուհի Ցիալայի համար քրեական օրենսգիրքն ինչ խոչընդոտ էր: Նա քրեական օրենսգրքի մասին դույզն ինչ պատկերացում չուներ:

Հենց Ցիալան էլ առաջարկեց հարցի լուծումը: Սև խավիարն Աստրախանի կոմբինատում արտադրվում էր նաև 50-գրամանոց ապակե տարաներով, որոնք Ցիալան Մոսկվայից Երևան էր բերում գնացքի վագոն-ռեստորանում: Քանի որ տիկին Ռիմայենց տանը, բացի

[14] Գյոզալ - չնաշխարհիկ

պարբերաբար հյուրընկալվող Ժորա մորեղբորից, ուրիշ ոչ ոք սև խավիար չէր սիրում (մեղմ ասած), 50-գրամանոց տուփը միանգամայն բավարար էր մեկ մարդու մեկ անգամ հյուրասիրելու համար:

Խավիարի ապակե տուփը փակ վիճակում պահում էին սառնարանում: Այն բացվում էր միայն այն ժամանակ, երբ Ժորա մորեղբայրը հյուր էր գալիս: Դա մի ամբողջ ծիսակարգ էր Սիրանուշ տատի համար: Նա պիտի նախ ստուգեր, որ բացված ապակե տուփի ամբողջ պարունակությունը տեղափոխվեր հատուկ ճենապակե ափսեի մեջ, որպեսզի «այդ գարշանքը» այսուայնկողմ չտարածվի: Այնուհետև պիտի հետևեր, որ Ժորա մորեղբայրն ուտի-վերջացնի, ու անձամբ մի քանի ջուր պիտի լվանար ճենապակե ափսեն՝ մաքրելով խավիարի բոլոր հնարավոր հետքերը: Դրանից հետո էլ դատարկ տարան թերթով բռնած անպայման պիտի տաներ ու նետեր աղբատար խողովակի մեջ (ոչ թե աղբի դույլի, որ դույլը հանկարծ չապականվի):

Այն օրերին աղբատար խողովակը բարձրահարկ (հինգից բարձր) շենքերում ինժեներական նորամուծություն էր համարվում: Գաղափարը լավն էր, բայց, ինչպես հաճախ էր լինում սովետների երկրում, ԲՇՏ-ների[15] փնթիության հետևանքով այս նորամուծությունն էլ իսկական պատուհաս դարձավ բարձրահարկերի բնակիչների գլխին:

Աղբատար կոչվածն աղբը հավաքող շինվածք էր ասբեստ-ցեմենտե խողովակի տեսքով, որի ստորին մասում աղբախուցն էր: Աղբալըցման բացվածքները դուրս էին գալիս աստիճանահարթակ և նախատեսված էին մի քանի բնակարանի համար: Աղբատար խողովակի վերին մասում դրվում էր այն մաքրող ձեղնահարկային խցիկ, շենքի տանիքում՝ դեֆլեկտոր (օդաքաշման ուժեղացման նպատակով): Ըստ գործող կանոնների՝ բացվածքները պետք է հերմետիկորեն փակվեին կափարիչներով: Աղբախուցը, որն առաջին հարկում էր, պետք է ունենար հրակայուն պատեր և լիներ կրծողների համար անթափանց:

[15] ԲՇՏ – բնակշահագործման տեղամասը (Жилищно-эксплуатационная контора – ЖЭК) սպասարկում էր ԽՍՀՄ պետական բնակֆոնդի տիպային շենքերի բնակիչներին:

Դրանում աղբը մեկ օրից ավելի պահել չէր թույլատրվում: Բայց, դե, ո՞վ էր այս գրված կանոններին ուշադրություն դարձնում: Աղբատարների բացվածքները ոչ միայն հերմետիկորեն չէին փակվում, այլև շատ հաճախ կափարիչ չունեին: Աղբախցերն էլ ոչ միայն անթափանց չէին կրծողների համար, այլև երբեմն նույնիսկ դուռ չունեին, ու առնետները վխտում էին դրանցում: Աղբը լավագույն դեպքում տեղափոխում էին շաբաթը մեկ: Այդ պատճառով խողովակներն աղբով լցվում էին մինչև երկրորդ, երբեմն էլ երրորդ, չորրորդ հարկերը, ստորին հարկերի բնակիչները ստիպված էին լինում աղբը թափելու համար մեկ-երկու հարկ բարձրանալ ու վերևից աղբը լցնել խողովակի մեջ: Քանի որ մաքրող ձեղնահարկային խցիկն ու դեֆլեկտորը սովորաբար չէին գործում, աղբատարը հաճախ խցանվում էր, ու բնակիչները ստիպված էին լինում աղբն այրել խողովակի մեջ: Այս ամենի հետևանքով շատ հաճախ (հատկապես ամառվա շոգ ամիսներին) բարձրահարկ շենքերի շքամուտքերում սարսափելի գարշահոտություն էր տարածվում:

* * *

Մի անգամ էլ այնպես պատահեց, որ Ժորայի պահեստն անորակ ապրանք ստացավ: Անհայտ պատճառով Մոսկվա-Երևան ապրանքատար գնացքն ինչ-որ կայարանում նախատեսվածից երկար էր կանգնել, ու մրգերի մի մասը փչացել էր: Պետք էր առողջ մրգերն արագ տարանջատել փչացածներից, թե չէ ամբողջ ապրանքը կփչանար: Իսկ դրա համար պահեստում աշխատող ձեռքեր էին պետք: Բարեկամներով մեծ ու փոքր հավաքվեցին ու գնացին պահեստ՝ Ժորա մորեղբորն օգնելու: Վիթխարի պահեստում նարնջի, մանդարինի, բանանի ու անանասի արկղերը, զանազան արևադարձային մրգերի կոմպոտներն ու այլ դեֆիցիտ ապրանքներով լի տարաներն էնպիսի առատություն էին ստեղծել, որ թվում էր, թե ինչ-որ մերձարևադարձային երկրում ես հայտնվել:

Պահեստը պատկանում էր Բանվորական մատակարարման բաժնին, բայց խորհրդային ոչ մի բանվոր դրա գոյության մասին գաղափար չուներ, դրանում պահվող տարատեսակ բարիքները ոչ միայն չէր համտեսել, այլև շատ անգամ դրանց մասին պատկերացում չուներ: Պահեստը մթերքներ էր մատակարարում միայն Հայաստանի կուսակցական վերնախավին:

Ու հիմա բարեկամներով եկել էին տեսակավորելու մի քանի տոննա փչացող նարինջն ու մանդարինը, որ ահռելի սարեր հիշեցնող կույտերով լցված էին ուղղակի գետնին: Դրանցից որքա՞ննն էր փչացած, որքա՞նը՝ առողջ. ո՞վ կարող էր հաշվել: Ասել է թե՝ կեր, որքան սիրտդ կուզի: Եթե միայն ուտելով պրծնեին... Տեսակավորման գործընթացը շատ արագ վերածվեց խրախճանքի: Հատկապես ուրախ էին երեխաները: Նրանց հրճվանքն անսահման էր. անանասներով՝ ֆուտբոլ, նարինջներով՝ վոլեյբոլ... Ու աչքը շինելու փոխարեն ունքը հանեցին: Բարեկամների տված օգո՞ւտն էր շատ, թե՞ վնասը. այդպես էլ պարզել չհաջողվեց, բայց Ժորա մորեղբայրը շատ արագ զղջաց, որ նրանց պահեստ էր բերել: Դա առաջին ու վերջին անգամ էր:

* * *

Ժորայի հորեղբայրը՝ Բարեղամ պապը, ևս կապված էր իր եղբորորդու ընտանիքի հետ: Նա հին բոլշևիկ էր, պատերազմի վետերան, կյանքն ապրել էր պարտիական ուստավի[16] համաձայն, ղեկավարվել վերադասի որոշումներով ու սոցիալիստական բարոյականության նորմերով: Մասնակցել էր պատերազմին, ոտքով Բեռլին հասել: Մայրաքաղաքի Լենինի հրապարակում[17] գտնվող կենտրոնական գրախանութի վարիչն էր:

[16] Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության կանոնադրությունը

[17] Լենինի հրապարակ – Երևանի Հանրապետության հրապարակի նախկին անվանումը

Գրքերը (հատկապես գեղարվեստական) սարսափելի դեֆիցիտ էին: Նա եղբոր թոռներին ծննդյան առիթով միշտ գրքեր էր նվիրում՝ իր ստորագրությամբ: Այդ տարիներին մեքենան էլ անհավանական ճոխություն էր: Վաճառում էին միայն հերթագրությամբ: Մարդիկ հերթագրվում էին մեքենա գնելու համար ու տարիներ սպասում իրենց հերթին, որը, սովորաբար, այդպես էլ չէր հասնում: Հերթ ծախելն էլ վերածվել էր մի յուրօրինակ բիզնեսի: Բայց հին բոլշևիկներն ու պատերազմի վետերանները, ի թիվս բազմաթիվ այլ արտոնությունների, այստեղ էլ «պետական գնով» մեքենա ձեռք բերելու հնարավորություն ունեին:

Մի օր էլ լուր ստացվեց, որ Բարեղամ պապին մեքենա են տալիս: Ո՛չ Բարեղամ պապը, ո՛չ էլ նրա միակ դուստրը՝ Լաուրան, որն այդ ժամանակ արդեն տարիքն առած կին էր, մեքենա վարել չգիտեին, ու մեքենան նրանց առանձնապես պետք էլ չէր, իսկ այ, Ժորա մորեղբոր համար մեքենան անհրաժեշտություն էր:

Բարեղամ պապն էլ որոշեց այդ մեքենան, ավելի ճիշտ՝ «պետական գնով մեքենա գնելու իրավունքը», նվիրել Ժորային: Ժորայի ընտանիքը շատ ուրախացավ, հատկապես որդին՝ Ահարոնը:

Երբ եկավ բաղձալի օրը, Ժորան հավաքեց փաստաթղթերն ու մեքենան ստանալու համար գնաց «15 կվարտալի ավտոսերվիս»: Այստեղ, իհարկե, շատ պետք եկան Ժորա մորեղբոր կապերը: Ամեն ինչ այնքան դյուրին չէր, որքան կարող էր թվալ առաջին հայացքից: Եթե դու ծանոթ չունեիր սերվիսում, քեզ բաժին կհասներ «խլամ»[18] մեքենա:

Նախ կարևոր էր մեքենայի շարժիչը: Պահեստամասերի դեֆիցիտի պայմաններում խորհրդային ավտոարդյունաբերությունն ամեն հնարք գործադրում էր՝ սուպեր դեֆիցիտ ժիգուլիների ինքնարժեքը պակասեցնելու նպատակով: Օրինակ՝ համեմատաբար բարձր կարգի ՎԱԶ 06-երն արտադրվում էին հիմնականում ավելի ցածր կարգի ՎԱԶ 03-ի, երբեմն

[18] Խլամ – հնոտի, անպետք իր, ցածրորակ ապրանք

էլ ավելի ցածր՝ «ջորու»[19] շարժիչով: Այս երկուսը հզորությամբ ու որակով զգալիորեն զիջում էին ՎԱԶ 06-ի «մորական» շարժիչին, բայց այս տարբերությունը, որը զգալիորեն պակասեցնում էր մեքենայի ինքնարժեքը, ամենևին չէր խանգարում, որ ՎԱԶ[20] ձեռնարկությունը տարբեր շարժիչներով մեքենաները նույն մեծածախ գնով վաճառի:

Նշանակություն ուներ նաև գույնը: Հարգի էին սպիտակ ու բաց կրեմագույն ժիգուլիները, բայց դրանք էլ հազվադեպ էին թողարկվում, քանի որ այս գույնի ներկերն ավելի թանկ էին, քան ասենք, կանաչը, կապույտը կամ կարմիրը: Ցանկալի գույնի ու ցանկալի շարժիչով մեքենա ձեռք բերելու համար պետք էր առանձին «շնորհակալություն հայտնել» սերվիսի վարիչին: Այդ «շնորհակալությունը», սովորաբար, տատանվում էր 100-300 ռուբլու սահմաններում՝ ըստ «օպցիաների» քանակի:

Ժորա մորեղբոր կապերը, իհարկե, թույլ տվեցին ձեռք բերել լավագույն օպցիաների համադրումը՝ բաց կրեմագույն ՎԱԶ 06, ընդ որում՝ 06-ի շարժիչով: Սերվիսում, սակայն, առաջ եկավ մի փոքրիկ խնդիր. քանի որ մեքենան անվանական էր, այն սերվիսից «բաց թողնելու» համար պետք էր ստացողի, այսինքն՝ Բարեղամ պապի ստորագրությունը: Ժորա մորեղբոր կապերն այստեղ էլ աշխատեցին: Սերվիսի վարիչն «աչքերը փակեց» ու «չնկատեց», որ Բարեղամ պապի փոխարեն ստացականը ստորագրեց Ժորա մորեղբայրը:

Երեկոյան բարեկամներով հավաքվեցին Կոնդում՝ «մաղարիչ խմելու» և «մեքենան թրջելու»: Ներկա էր նաև Բարեղամ պապը, որը, ինչպես միշտ, գրավել էր իր պատվավոր տեղը՝ սեղանի վերին գլխին: Կենացներ խմեցին, շնորհավորեցին, քննարկեցին ժիգուլիների առավելություններն ու թերությունները, մի լավ ուրախացան: Խնջույքի թունդ պահին Բարեղամ պապը դիմեց Ժորա մորեղբորը՝ հարցնելով, թե երբ պետք է գնա սերվիս՝ մեքենայի ստացականը ստորագրելու:

---

[19] Ջորի – «Ժիգուլի» ավտոմեքենա, ՎԱԶ 21011

[20] ՎԱԶ (ВАЗ – Волжский автомобильный завод) – խորհրդային խոշորագույն ավտոգործարան, որը հայտնի էր «Լադա» և «Ժիգուլի» մեքենաներով:

Բարեղամ պապը Սովետի օրենքները շատ լավ գիտեր: Նա նաև իր ստորագրության զորությունը գիտեր (ու անսահման հպարտ էր դրանով), վստահ, որ առանց իր ստորագրության սերվիսը մեքենա «բաց թողնելու» իրավունք չունի: Մի քիչ գինովցած Ժորա մորեղբայրն էլ ուրախ-ուրախ պատմեց, թե ինչպես կարողացավ սերվիսի վարիչին «համոզել» ու ստացականի վրա կեղծել Բարեղամ պապի ստորագրությունը:

Կայծակն անամպ երկնքում այդպես չէր պայթի Բարեղամ պապի գլխին, ինչպես այդ սահմռկեցուցիչ լուրը՝ ինչ-որ մեկը (անձն էական չէր, թեկուզ հարազատ զավակը) հանդգնել էր կեղծել (թեկուզ և անշառ նպատակով) իր՝ հին բոլշևիկի ու պատերազմի վետերանի ստորագրությունը: Բարեղամ պապը մթագնեց, սաստիկ զայրացավ, աշխարհի լուտանքները թափեց Ժորա մորեղբոր գլխին, նրան անվանեց գող ու խաբեբա, վերջում էլ հայտարարեց, որ «այս հանցագործությունն» անպատիժ թողնել չի կարող և սոցիալիստական սեփականության հափշտակության համար դատի կտա իր եղբորորդուն ու սերվիսի վարիչին:

Թե ինչպես զարգացան իրադարձություններն այս հայտարարությունից հետո, դժվար է նկարագրել: Ոչ ոք չէր կասկածում, որ Բարեղամ պապն առանց մի պահ անգամ վարանելու կիրականացնի դատի տալու իր սպառնալիքը: Ազգ ու բարեկամ իրար խառնվեցին, որ Բարեղամ պապին համոզեն հետ կանգնել այդ քայլից, բայց Բարեղամ պապն անդրդվելի էր:

Տեսնելով, որ խնդիրը լուծում չունի, Ժորա մորեղբայրը ճարահատյալ դիմեց սերվիսի վարիչին: Թե ինչպես հաջողվեց համոզել նրան, հայտնի չէ, բայց հաջորդ օրը վարիչը չգիտես ինչ հնարքով դուրս գրված նոր ստացականով ներկայացավ Բարեղամ պապին: Սա էլ հանդիսավորությամբ ստորագրեց (իհարկե, վարիչին մի լավ նախատելուց հետո) նոր ստացականը: Վարիչը հինը ոչնչացրեց նրա ներկայությամբ: Դրանից հետո միայն Բարեղամ պապը հանգստացավ, Ժորա մորեղբայրն էլ թեթևացած շունչ քաշեց:

***

Ժորա մորեղբոր միակ որդին՝ Ահարոնը, 90-ականների կեսին ամուսնացավ ու տեղափոխվեց Մոսկվա: Նրա ընտանիքը բնակվում էր Սիրենևի բուլվար կոչվող փողոցում: Ամեն անգամ Մոսկվա գնալիս՝ տիկին Ռիման պարտադիր պիտի այցելեր Ահարոնին ու նրա ընտանիքին:

Ահարոնի կինը՝ Լուսինեն, շատ լավ խոհարար դուրս եկավ: Հրաշալի կերակուրներ էր պատրաստում: Նրա թխած խմորեղենն իսկական արվեստի գործ էր: Օրինակ՝ «նարդին» հեռվից նայելիս իսկականից չէր տարբերվում, թեև սև ու սպիտակ շոկոլադե «քարերը» հեշտությամբ հալվում էին լեզվի վրա, ընկույզից ու բեզեից պատրաստված «նարդու տուփը» խրթխրթան էր ու շատ համեղ: Ռիմիկ հորաքույրը շեմից ներս չմտած՝ Լուսինեն հարցնում էր.

— Ռիմիկ տոտա, մի հատ կոֆե դնեմ, խմենք, նոր սեղան նստենք, չէ՞:

Տիկին Ռիմայի պատասխանը, իհարկե, հաստատական էր (նա սուրճից երբեք չէր հրաժարվում): Սուրճը, իհարկե, մատուցվում էր տարատեսակ թխվածքաբլիթներով, մրգերով ու կոնֆետներով: Դրանից հետո միայն սեղան էին նստում:

Բացի ավանդական հայկական ուտեստներից՝ Լուսինեն ամեն անգամ ինչ-որ նոր կերակուր էր պատրաստում ու ստիպում անպայման փորձել իր խոհարարական արվեստի հերթական գլուխգործոցը: Իհարկե, խոլեստերինի ու գլյուկոզայի սահմանաչափերի մասին խոսք անգամ լինել չէր կարող:

Լուսինեն շատ էր սիրում խոհարարական էքսպերիմենտներ: Դրանք երբեմն այնքան լավ արդյունք էին տալիս, որ ուտելիքի հարցում չափազանց պահպանողական Ռիմիկ հորաքույրը համտեսում ու հիացական խոսքեր էր շռայլում Լուսինեի խոհարարական ունակությունների հասցեին:

Օրինակ՝ ֆունչոզայով աղցանը: Այլ պայմաններում տիկին Ռիման անունն իսկ չէր ուզի լսել, բայց Լուսինեի պատրաստածը շատ հավանեց:

Ահարոնենք տանը շուն ունեին՝ Yorkshire Terrier ցեղատեսակի, անունը՝ Ջենի: Ջենին անսահման ուրախանում էր հյուր տեսնելիս և ուրախ կլվը-լոցով գցվում էր հյուրերի գիրկը: Տիկին Ռիման փորձում էր վանել նրան, բայց ապարդյուն: Ահարոնն ու Լուսինեն էլ ապարդյուն փորձում էին Ջե-նիին հեռացնել տիկին Ռիմայից:

Տեսնելով, որ չի ստացվի, Լուսինեն ճարահատյալ օգնության էր կանչում դստերը: Ժասմինը՝ Ահարոնի դուստրը, խնդիրը լուծում էր արմատապես. գրկում էր Ջենիին, նստում բազկաթոռին և միայն իրեն հայտնի բառերով «բացատրական աշխատանք» էր տանում նրա հետ: Որքան էլ տարօրի-նակ է, դրանից հետո Ջենին միանգամից «խելոքանում էր», քաշվում մի անկյուն, պառկում գետնին ու լուռ հետևում տան անցուդարձին:

Մոսկվայում եղանակն առանձնապես բարեհաճ չէ հատկապես հարավի բնակիչների համար: Ձմեռը խստաշունչ է ու կես տարի է տևում: Ջերմաս-տիճանը ձմռանը կարող է հասնել մինչև -20-25, իսկ ամռանը, հատկա-պես օգոստոսին, մինչև 30-33 աստիճանի, ինչն էլ խոնավ կլիմայի պատ-ճառով օդը դարձնում է հեղձուկ, շնչելը՝ դժվար: Բայց թե՛ ձմռան ցրտին, թե՛ ամառվա տապին Ահարոնենց՝ Սիրենևի բուլվարի 62 շենքի փոքրիկ բնակարանում Ռիմիկ հորաքրոջը միշտ ջերմ ու հաճելի մթնոլորտ էր սպասում:

«Կարգին կոֆեն» ու Խաթունարխի «տնօրինեքը»

Կոնդեցիներից հետո տիկին Ռիմայի ամենամոտ հարազատները խաթունարխցիներն էին՝ հոր՝ Մխիթարի, մորեղբոր գերդաստանը: Հաճախ էր այցելում Վերին Խաթունարխ՝ հարազատներին տեսակցելու:

«Խաթուն արխ» նշանակում է Խաթունի առու: Ավանդապատումն այս անվանումը կապում է պարսից խանի կնոջ՝ Խաթունի անվան հետ: Սիմեոն Երևանցու վկայությամբ՝ պարսից Սեֆի խանը 1655-1680 թթ. կառուցում է Ֆարշի ջրանցքը, որը սկիզբ էր առնում Սևջուր գետից: Խանի կինը՝ Խաթունը, այդ ջրանցքից հանում է մի նոր ջրանցք (որը նրա անունով կոչվում է Խաթունարխ), ապա ջրանցքի վրա կառուցում է երկու գյուղ՝ Վերին և Ներքին Խաթունարխ գյուղերը:

1828-1829 թթ. Վերին Խաթունարխում բնակություն են հաստատել Խոյից ու Սալմաստից գաղթած հայերը: Որոշ թվով բնակիչներ էլ Սուրմալուից այստեղ են տեղափոխվել Առաջին համաշխարհային

պատերազմի տարիներին[1]: Մեկ ընտանիք էլ Վանից էր գաղթել (հետաքրքիր զուգադիպությամբ՝ Հայոց ձորի Անգղ գյուղից[2]):

Առաջներում Խաթունարխում կարմիր սոխ, հետո նաև բամբակ էին մշակում: Տաժանակիր աշխատանք էր՝ օրվա մեծ մասը մինչև ծնկները ջրի մեջ, կիզիչ արևի տակ: Հետո որոշեցին ճահիճները չորացնել և սեխ ու ձմերուկ աճեցնել: Խաթունարխի օվալաձև, հոտավետ սեխն ու մեծ, սև կորիզներով ձմերուկը հայտնի էին քաղցր ու անկրկնելի համով:

Ավելի ուշ՝ 70-ականներին, կոլխոզը վերածեցին սովխոզի, ու Պետպլանում[3] որոշեցին, որ Խաթունարխի սովխոզի հիմնական արտադրանքը պետք է դառնա խաղողը: Սեխի ու ձմերուկի բոստանները քանդեցին ու խաղողի բաղեր հիմնեցին: Քաղաքաբնակները շատ արագ սիրեցին Խաթունարխի խարջին, մուսկատը, Անահիտը, իծապտուկը, քիշմիշը: Խաթունարխցիներն իրենց խաղողը (հատկապես իծապտուկը, որը շատ դիմացկուն սորտ էր ու Ամանորին դեռ պահպանում էր թարմությունը) վաճառում էին ոչ միայն Երևանի, Լենինականի ու Կիրովականի կոլտնտեսային շուկաներում, այլև հասցնում էին Թիֆլիս, ոմանք՝ նույնիսկ Սոչի ու Կրասնոդար:

Մինչև անցած դարի 60-ականները գյուղի մատույցներում սահմանապահ ուղեկալ էր տեղակայված: Գյուղ կարելի էր մուտք գործել միայն հատուկ անցագրերով: Կամ էլ եթե մեկը գյուղում հարազատի կամ բարեկամի էր այցելում, ապա այդ հարազատն իր անձնագրով պետք է անձամբ ներկայանար ուղեկալ, անձնական պատասխանատվությամբ «հավաստեր» տվյալ անձի իսկությունն ու իր տուն տաներ նրան:

---

[1] Հայոց ցեղասպանությունն Օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ, հ. 1, Երևան, 2012, էջ 152, 153

[2] Վշտապատում. Հայոց Մեծ եղեռնը ականատեսների աչքերով, Երևան, 2005, էջ 55

[3] Պետպլան – Մինիստրների խորհրդի հանրապետական մարմին: Մշակում էր ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման միասնական համապետական պլանների նախագծերն ու վերահսկում պլանների կատարումը:

Խաթունարխում ամառը միշտ շոգ էր լինում, մոծակներն էլ անխնա խայթում էին: Տեղացիներն այդ խայթոցին սովորել էին, բայց քաղաքաբնակների «սպիտակ մաշկն» առանձնապես զգայուն էր մոծակների խայթոցի նկատմամբ: Նրանք շատ էին տանջվում մոծակների ձեռքը:

...Գյուղում առաջին կանգառը Գորիկենց տունն էր: Գորիկը՝ տիկին Ռիմայի հոր քեռու կրտսեր որդին, գյուղի բարեկամների մեջ տարիքով ավագն էր: Գորիկի հարսը՝ Էմման, նրա կրտսեր որդու՝ Քաջիկի (տանը նրան Սաշա էին ասում) կինն էր, ծնունդով գյումրեցի էր: Երբ հարս էր գալիս, ծնողները մի տեսակ չկամությամբ համաձայնեցին: Հայրը վստահ էր, որ քաղաքում ծնված ու մեծացած իր դուստրը գյուղական կյանքին չի հարմարվի: Ասում էր. «Նա քաղհան անող չի»: Բայց բարեհամբույր, հյուրասեր, սրտաբաց ու շիտակախոս (չէ՞ որ գյումրեցի էր) Էմման տարիների ընթացքում այնքան մերվեց գյուղական առօրյային, ասես ծնվել ու մեծացել էր հենց Խաթունարխում:

Նախօրոք տեղյակ լինելով, որ Ռիմիկ հորաքույրն է գալու, Էմման սովորաբար տարատեսակ խմորեղեն էր թխում: Դեռ հյուրերը ներս չմտած՝ Էմման միանգամից առաջարկում էր.

— Ռիմիկ տոտա ջան, ճամփից եք եկել, մի հատ կոֆե դնեմ, խմենք:

Պատասխանը, իհարկե, հաստատական էր:

— Դիր, Էմմա ջան, մի հատ կարգին կոֆե դիր, խմենք, հետո տեսնենք՝ ինչ ենք անում:

«Կարգին կոֆե» ասելով՝ ակնարկում էր իր զավակներին: Քանի որ տիկին Ռիման շաքար ուներ, զավակներն արգելում էին չարաշահել սուրճը, որը նա սովորաբար շաքարով էր խմում: Բայց, քանի որ սուրճ շատ էր սիրում (օրը մինչև յոթ-ութ գավաթ խմում էր), զավակներն աշխատում էին պակասեցնել սուրճի ու շաքարի պարունակությունն ըմպելիքում: Նրանց եփած սուրճը տիկին Ռիման «կոֆեաջուր» էր անվանում:

Քիչ անց Էմման սեղան էր գցում մրգով, խմորեղենով, կոնֆետներով ու սուրճով: Ու մինչ նա սուրճի պատրաստություն էր տեսնում, Քաջիկը սկըսում էր խորովածի պատրաստությունը: Սուրճը խմելուց, կանանց որպիսությունը հարցնելուց ու նորություններն իմանալուց հետո տիկին Ռիման դիմում էր զավակներին.

— Դե, վեր կացեք, գնանք, մյուսներին էլ տեսնենք, գանք:

— Շատ չուշանաք, խորովածն արդեն դնում եմ կրակին,– անպայման զգուշացնում էր Քաջիկը, որն արդեն լոլիկը, բիբարն ու բադրիջանը դրել էր կրակին ու միսն էր շարում շամփուրների վրա:

Տիկին Ռիման սկսում էր իր այցելությունների շարքը՝ գնում էր «տնօրինեքի», ինչպես կատակով ասում էին տեղացիները: Հաջորդ կանգառը Գորիկի մեծ եղբոր՝ Ժորայենց տունն էր: Այցելում էր Ժորայի կնոջը՝ Սեդային: Ժորային բոլորը հիշում էին որպես չափազանց բարի, կամեցող, նեղ օրի հասնող, նաև ուտող-խմող ու շատ հյուրասեր մարդու: Նրա տանը հյուրերն անպակաս էին:

Այն տարիներին հյուրանոցներ ու հյուրատներ գրեթե չկային: Եղածն էլ՝ մատների վրա հաշված, միայն մայրաքաղաքում ու խոշոր քաղաքներում: Տրանսպորտն էլ քիչ էր, հատկապես գյուղական վայրերում: Դրա համար էլ մարդիկ քաղաքից գյուղ իրար հյուր էին գնում հիմնականում գիշերակացով:

Մի անգամ էլ Եսթեր տատը՝ Ժորայի հորաքույրը (տիկին Ռիմայի հոր մորաքույրը), հյուր էր եկել իր եղբորորդուն: Նրան, որպես պատվավոր հյուրի, տրամադրել էին «նոր լվացած տեղաշոր»: Լվացքի պարագաներ շատ չկային, ու ընդունված էր անկողնային սպիտակեղենը մի քանի ջուր լվանալուց (երբեմն եռացող ջրում «եփելուց») ու պարզաջրելուց հետո նաև օսլայել: Դրանից հետո անկողինը դառնում էր թարմ ու ձյունաձերմակ, բայց նաև մի տեսակ սլլան[4]:

[4] Սլլան – սայթաքուն, դյուրասահ

Եսթեր տատն էլ, որ անքնությամբ էր տառապում, գիշերն անկողնում շատ էր շուռումուռ գալիս: Ու հերթական անգամ «կողքը փոխելիս»՝ սահել ու թախտից վայր էր ընկել: Ինչ խառնաշփոթ ու իրարանցում էին սկսվել: Եսթեր տատը լուտանքի տուտը բացել էր, հարսներին կապել հայհոյանքի, թե դուք «էս քյաք հորի՞ քսեր եք էդ անտեր տեղաշորին»:

Ժորայենց տանը հաճախ էին հյուրընկալվում նաև անվանի մարդիկ՝ Համո Սահյանը, Էդուարդ Իսաբեկյանը, Ժան Գառզուն, Սերո Խանզադյանը, Սարգիս Մուրադյանը...

Պատմում էին, որ, մի անգամ Ժորայենց տուն հյուր գալիս, նրանց ընկերակցում է նաև Վաչե Հովսեփյանը: Տանտերը շատ է ուրախանում, խնդրում է մի բան նվագել: Անվանի դուդուկահարը չի համաձայնում, երևի պատվից ցածր է համարում նման միջավայրում նվագելը: Էդուարդ Իսաբեկյանը, սակայն, խեթ նայելով սեղանակցին, քթի տակ մրմնջում է. «Խելոք կչալես»:

Սովորականի պես սեղան են գցում, պատվավոր հյուրերին հյուրասիրում ըստ տեղի ադաթների: Մի քանի բաժակ տնական օղի ներս անելուց հետո ծիրանափողի անզուգական վարպետն ինքն իր հոժար կամքով վերցնում է դուդուկն ու նվագում: Դառնալով նրան՝ Իսաբեկյանը ժպտում է. «Բա որ ասեցի՝ կչալե՞ս»...

Ժորան գյուղի սովխոզի բրիգադիրն էր եղել, սովխոզի հանդերն էլ տարածված էին Խաթունարխ-Արգավանդ ավտոճանապարհի երկու կողմերում: Տարիներ առաջ՝ 1981-ին, երբ Ժորան ընդամենը 55 տարեկան էր, մի հանդից մյուսն անցնելու համար հատել էր ճանապարհն ու ընկել բեռնատարի տակ, որի արգելակները չէին գործել: Մեքենան մեծ արագությամբ հարվածել էր նրան: Ժորան հիվանդանոցի ճանապարհին մահացել էր...

Սեդան, որ լսել էր Ռիմիկի գալու մասին, արդեն սեղան էր գցում՝ իրենց բաղի մրգերը, տնական կոմպոտ, չիր ու նման բաներ: Դեռ Ռիմիկը դարպասից ներս չմտած՝ Սեդան ձայնում էր.

— Մանո՛ւշ, Ազգա՛ն, կոֆեն դրեք, Ռիման էկավ:

Մանուշն ու Ազգանուշը Սեդայի դուստրերն էին: Սեդան նաև երեք որդի ուներ՝ Ստեփանը, Էմինն ու Միերը: Տիկին Ռիման այստեղ էլ, ինչպես նախորդ կանգառում, մի տոպրակ էր փոխանցում տանտիրոջը: Ամեն անգամ գյուղ գալիս՝ տիկին Ռիման իր հետ բերում էր այն, ինչն այն ժամանակ դժվար էր ճարվում՝ կոնյակ, բոնբոներկա, սուրճ, կոնֆետներ: Խաթունարխ գնալիս տիկին Ռիման այս ամենը վաղօրոք էր գնում, հավասար քանակով դասավորում առանձին տոպրակների մեջ: Չորս տոպրակ՝ չորս տուն այցելելու համար: Սեդան էլ, մինչև դուստրերը սուրճի սեղանը կպատրաստեին, «մե քիչ այնոյին էր հազրում», որ դներ Ռիմիկի հետ՝ իրենց բաղի մրգերը, բանջարեղեն, կանաչեղեն, թուփ, թթու, տնական պահածոներ: Աղացած կարմիր պղպեղը միշտ լցված էր լինում երկու առանձին տոպրակներում. մեկը՝ մեծ (0,5-1 կգ), մյուսը՝ փոքր (200 գրամից էլ պակաս): Ու ամեն անգամ, մատնացույց անելով փոքր տոպրակը, Սեդա մորաքույրը զգուշացնում էր.

— Տե՛ս, Ռիմա՛, զգուշ ել, էտան տաճիկ[5] ի:

Սա նշանակում էր, որ փոքր տոպրակի պարունակությունն այնքան կծու է, որ դրա քառորդ պտղունցն անգամ «մե ղազան ճաշը բարութ[6] ի սարքել»: Սեդան նաև հիանալի քուֆթա[7] էր խփում: Այն տարիներին քուֆթան խփում էին տան պայմաններում հատուկ պատրաստված փայտե հարիչով: Քուֆթա խփելն իսկական տանջանք էր, ու ամեն մարդու բան չէր: Սեդան գյուղի լավագույն քուֆթա խփողն էր: Եթե, բան է, այդ օրը Սեդան քուֆթա էր խփել, ապա Ռիմիկին անպայման բաժին էր հանում: Նրա խփած քուֆթան բերանում հալվում էր:

---

[5] Տաճիկ - փոխաբերական իմաստով՝ շատ կծու

[6] Բարութ - փոխաբերական իմաստով՝ թունդ, բարկ

[7] Քուֆթա - մսային կերակուր, պարսկերեն նշանակում է «մսի գնդիկներ»: Պատրաստում են հիմնականում տավարի թարմ մսից: Միսը փայտե թակիչով ծեծում են սալաքարի վրա, խառնում սոխ, աղ, պղպեղ և այլ համեմունքներ, ձեռքով հարում մինչև համաձույլ զանգված դառնալը, պատրաստում խոշոր գնդիկներ, եփում ջրում:

* * *

Հաջորդ կանգառը Գորիկի ավագ որդու՝ Մխիթարի (նրան տանը Միշա էին ասում) տանն էր: Միշայենց տունը Սեդայենց տան դեմ-դիմաց էր: Միշան Վլադիվոստոկում էր ծառայել, առաջին վեց ամիսը դերձակ էր եղել, հետո էլ ֆուտբոլի ակումբում էր խաղացել ու էդպես գլորել էր պարտադիր զինվորական ծառայության երկու տարիները: Բանակից վերադառնալով՝ Միշան սկսել էր աղունիկներ պահել: Դա նրա տարերքն էր: Հարազատ-բարեկամներով ինչ ասես, արեցին, բայց Միշային իր տարերքից հետ պահել չկարողացան: Հայրը մի անգամ, սաստիկ զայրույթի պահին, նրա բոլոր աղունիկներին «վզագլոր»[8] էր արել: Բայց դա էլ չէր օգնել: Ժամանակի ընթացքում բոլորն ասես ընտելացան Միշայի տարերքին ու ձեռք քաշեցին նրան խրատելու անշնորհակալ գործից:

Ու հիմա Միշայի կինը՝ Վարդուհին, որին Միշան Դաշտ գյուղից էր հարս բերել, ու որին իր անհատնում էներգիայի համար Հրեղեն էին ասում, փորձում էր բակով մեկ տարածված աղունիկներին մի կողմ քշել, որ ոտքի տակ չընկնեն ու պատվարժան հյուրերին անհանգստություն չպատճառեն: Սուրճի սեղանն արդեն պատրաստ էր, այնոյինն էլ հազր՝ չոր լավաշ, տնական պանիր, կաթ ու մածուն, թարմ կանաչի, պահածոներ, միրգ ու բանջարեղեն...

* * *

«Տնօրինեքն» ավարտելով Գորիկի միակ դստեր՝ Լյուբայենց տանը, տիկին Ռիման վերադառնում էր Գորիկենց տուն: Էստեղ արդեն խորովածը քաշել, սեղանը գցել ու նրան էին սպասում: Խոլեստերինի, ճարպերի ու գլյուկոզայի բոլոր թույլատրելի նորմերը խախտվում էին, մսամթերքի

[8] Վզագլոր անել - վիզը ոլորել

սահմանափակումները՝ ժամանակավորապես մոռացվում: Ընթրիքը տևում էր մինչև ուշ երեկո:

Բոլոր տներից հավաքված «մե քիչ այնոյինն» էլ այնքան շատ էր լինում, որ հազարագույն ՎԱԶ 06-ի բեռնախցիկը հազիվ էր փակվում: Դե իսկ մածնի ու թթվի բանկաները մեքենայի սրահում էին տեղավորում:

Ժամանակները փոխվում էին, փոխվում էին սերունդները, փոխվել էր գյուղի անվանումը[9], բայց խաթունարխցիների ջերմ ու սրտաբաց ընդունելության ավանդույթը մնում էր անփոփոխ: Տարիների հետ միայն սեղանների առատությունն էր ավելանում, ու բոլոր խորտիկներն անպայման համտեսելու պարտադրանքն էր խստանում:

[9] 1978-ին գյուղն անվանափոխվեց և կոչվեց Ակնաշեն (տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 11, էջ 403):

Արեգնազի «շաքարն» ու հարսնաքույր Թագուշի «տենդը»

Տիկին Ռիմայի մայրը՝ Սիրանուշ տատը, ծնունդով վանեցի էր: Ծնվել էր Վանի նահանգի Հայոց ձոր գավառի Անգղ գյուղում: Վանա լճի հյուսիս-արևելյան կողմում՝ Խոշաբ գետի հովտում, Հայոց ձորի այգեվետ շրջանի այս գյուղում բացված ծխական դպրոցը[1] գործել է մինչև Հայոց ցեղասպանությունը, որի նախօրեին դպրոցի ուսուցչապետն Անգղա Ս. Աստվածածին վանքի քահանա Տեր Գևորգն էր՝ տիկին Ռիմայի մայրական պապը:

Սիրանուշը վեց տարեկան է եղել, երբ հայրը՝ Տեր Գևորգը, իր երկու մանկահասակ դուստրերին ու կնոջը՝ Անթառամին, նաև տարիներով կուտակած կարողությունը փախեփախի ժամանակ հանձնել է եղբորը՝ Արմենակին, որ տանի, Արաքսն անցկացնի ու «բուն դնի» Ռուսահայաստանում: Ինքն էլ ճամփա է ընկել դեպի Միացյալ Նահանգներ, որ աշխատանք գտնի, տուն կառուցի, «խարիսխ գցի» ու ընտանիքն էլ հետո տանի այնտեղ, որ նոր կյանք սկսի ու նոր հայրենիք գտնի:

[1] Որոշ աղբյուրներում հիշատակվում է որպես ուսումնարան: Հիշատակումները տես՝ Ծերուկ, Վանի նահանգը ներկայումս, նաև «Միւրճ», 1904, N 4, էջ 32, «Հորիզոն», 1913, N 12, 17 յունվար, էջ 3 և այլն:

Մեծ զրկանքների գնով, Սիրիայի անապատներով ոտքով հասել էր Լիբանան, նավ էր նստել ու ափ իջել Նյու Յորքում: Ավա՜ղ, ճակատագիրն անողոք էր գտնվել Գևորգ պապի նկատմամբ: Նյու Յորքում մեքենայի տակ էր ընկել ու մահացել:

Մանկահասակ Սիրանուշը Ռուսահայաստանում ստիպված էր զօրուգիշեր ճախարակ մանել քրոջ ու հորեղբոր կնոջ հետ: Դեռատի աղջնակի համար ծանր, անտանելի աշխատանք էր: «Փոքր էի, ոտքս էլ չէր հասնում, որ ճախարակը պտտեմ: Դրա դարդից փախա, գնացի որբանոց»,– հետագայում հիշում էր Սիրանուշ տատը:

1920 թվականի աշնանը բոլշևիկները վերցնում են իշխանությունը: Հորեղբայրը՝ Արմենակը, վախենալով հնարավոր հետապնդումներից, մի քանի ընկերների հետ հեռանում է քաղաքից: Օգտվելով հորեղբոր բացակայությունից՝ Սիրանուշը ծածուկ փախչում է տնից ու գնում Ամերկոմի որբանոց: Ուզում էր կրթություն ստանալ, ինչպես հայրն էր ավանդել: Գաղթական երեխաների համար Արևելյան Հայաստանում կրթություն ստանալու միակ հնարավորությունը տալիս էին ամերիկյան որբանոցները:

«Գնացի հորս ընկերոջ մոտ: Նա էդ ժամանակ ամերիկացիների մոտ էր աշխատում: Ասեցի. «Քեռի Նշան, ինձ էլ ընդունեք մանկատուն»: Բարկացավ, սկսեց գոռգոռալ. «Կորի, գնա, այ լակոտ: Հորեղբայրդ որ էկավ, մեզ սուրգյու[2] կքշի»: Ասեցի. «Հենց հորեղբայրս էկավ, դուրս կգամ մանկատնից»: Մի կերպ համոզեցի: Վերջն ընդունեց»,– պատմում էր Սիրանուշ տատը:

Նրան տեղավորում են Ալեքսանդրապոլի[3] «Կազաչի պոստի»[4] 9-րդ մանկատանը: Տասնամյակներ անց Սիրանուշ տատը հիշում էր, որ Արմենակ

---

[2] Սուրգյու – թուրքերեն sürgün (սուրգյուն) բառից է, որը նշանակում է աքսոր, սուրգյու քշել՝ աքսորել

[3] Ալեքսանդրապոլ – Գյումրի քաղաքի նախկին անվանումներից մեկը

[4] Կազաչի պոստ (Казачий пост) – հայկական շրջաններում ռուսական զինվորական առաջին կայազորը: Ռուս-օսմանյան սահմանը պաշտպանելու համար ուղարկված կազակները 1827-ին կառուցեցին սահմանամերձ ամրություններ և Գյումրիին կից ավան հիմնեցին, որը վերածվեց սահմանամերձ ուղեկալի ու կոչվեց Կազաչի պոստ:

հորեղբայրն իմանալով այդ մասին սաստիկ զայրացել ու վիրավորվել էր՝ համարելով, որ Սիրանուշն «իր փափախը գետնով տվեց»: Ինչ հնարքնե-րի ասես, որ չէր դիմել, ում ասես, մեջ չէր գցել, որ Սիրանուշին տուն վերա-դարձնի, բայց ապարդյուն: Ուսում ստանալու փափագը դեռատի աղջնա-կի մեջ չափազանց զորեղ էր եղել:

Ու երևի բարին էլ դա էր, քանի որ հենց այստեղ էլ նա ծանոթացել էր իր ապագա ամուսնու հետ: Նրանք առաջին անգամ հանդիպել էին որբա-նոցի ճաշարանում, քանի որ ճաշարանը միակ տեղն էր, որտեղ կարող էին հանդիպել որբանոցում պատսպարված տղաները (տեղավորված էին Պոլիգոններում) և աղջիկները (տեղավորված էին Կազաչի պոստի և Սևերսկու որբանոցներում):

Հետագայում Սիրանուշ տատն այսպես է հիշում ճաշարանում հայտնվելու պատմությունը[5].

«Մի օր մեր երևանցի Ռեհանն էկավ, թե.

— Սիրո՛ւշ, արի գնանք մեր մանկատուն, մի քիչ ման գանք: Քեզ կծանո-թացնեմ մեր մանկատանը, իմ անկողինը ցույց կտամ:

Ես էլ հավատացի, վեր կացա, ընկա էդ աղջկա հետևից, գնացի: Գնա-ցինք, ինձ դռուզ տարավ ճաշարան: «Վա՛յ, էս ինչ կրակ էր»,– մտածեցի ու հարցրեցի.

— Ախչի՛, դու ինձ ինչի՞ բերեցիր էստեղ:

— Հա, հեսա մի բան պիտի ասեմ ու գնանք,– պատասխանեց: Մտանք ճաշարան, մի միջահասակ մարդ էր նստած: Տարավ նրա մոտ:

[5] Սիրանուշ Մարտիրոսյանի հուշերի ձայնագրությունները պահվում են Ռիմա Խաչատրյանի անձնական արխիվում:

— Պարոն Սրապիոն,– դիմելով նրան, ասաց Ռեհանը,– էս էն աղջիկն ա, որ ես ասում եմ:

Էդ մարդն էլ ոտքից գլուխ չափեց ինձ ու ասեց.

— Շատ լավ: Դու էսօրվանից կմնաս, ճաշարանում կաշխատես, սեղանապետ կլինես:

— Ի՞նչ, ճաշարա՞ն,– ես ճաշարանի դռները որ տեսնում եմ, փախնում եմ տասը վերստ, որ հանկարծ չասեն, թե ճաշարանի դռներն եմ էկել: — Չէ, ես ճաշարանում չեմ աշխատի:

Ու փախա-գնացի: Էլ ո՛չ Ռեհան հարցրեցի, ո՛չ ընկերուհի, ո՛չ բան: Վեր կացան, էկան մեր կառավարչի մոտ: Կին էր՝ ղարաբաղցի: Ասեցին.

— Էս աղջկան պիտի տաս՝ մեզ մոտ, ճաշարանում, աշխատի:

Ես լաց եմ լինում, ասում եմ.

— Չէ՛, ես ճաշարանում չեմ աշխատի: Չէ՛ որ չէ:

Մեր կառավարիչն էլ թե.

— Այ, տափը մտնես, դու, տափը: Ուրիշները խնդրում են, որ ճաշարանում աշխատեն, քեզ էլ զոռով են տանում, չե՞ս գնում: Կգնա՛ս ու սուս-փուս կաշխատես:

— Ես չեմ աշխատի, ես դաս եմ սովորում, ես թույլ աշակերտ եմ:

Պարոն Սրապիոնն էլ թե.

— Աղջիկ ջան, ես քեզ թույլ կտամ՝ նստես, դասերդ սովորես:

Ասեցի.

— Ես ճաշարան չեմ մտնի: Որ զույգերը[6] գան, ես ամոթից կմեռնեմ:

— Աղջիկ ջան,– ասաց Սրապիոնը,– դու հեչ մի՛ մտածիր: Դու սեղանը պատրաստիր, թող ու դուրս արի: Երբ կուտեն, կվերջացնեն, կգաս, քո սեղանը կհավաքես:

Ես էլի լաց ու կոծ դրեցի, խնդրեցի, աղաչեցի, ի՞նչ արեցի, չկարողացա պոկվել: Վերջ ի վերջո, ինձ տարան ճաշարան: Հետո պարոն Սրապիոնը փոխվեց, էկավ մի ռուս «պապաշա»: Սա էլ թե.

— Քանի պապաշա՝ էստեղ, Սիրուշ՝ էստեղ:

Էդպես մնացի ճաշարանում աշխատելու»:

* * *

Արմենակի կինը մահացել էր, երեք մանկահասակ որդիները՝ որբացել: Առանց այդ մասին իմանալու՝ Սիրանուշն արձակուրդ էր խնդրել ու եկել Երևան՝ հորեղբորը տեսնելու: Հենց այդ այցելությունն էլ բախտորոշ էր եղել նրա համար: Տեսնելով հորեղբոր «վիզը ծուռ» որդիներին՝ շատ էր հուզվել: Տղաների անխնամ վիճակը նրան ստիպել էր չորս տարի[7] ամերիկյան որբանոցում անցկացնելուց հետո, 1924 թվականի ամռանը, կիսատ թողնել ուսումը, հեռանալ որբանոցից ու ստանձնել մանուկների խնամքը:

Հետագայում Սիրանուշ տատը հաճախ էր հիշում իր տունդարձը. «Էկա տուն: Տունը տեղն էր, բայց տանը մարդ չկար: Պատուհանից ներս նայեցի՝ տան կահկարասին տեղն էր, բայց մարդ-մադաթ չկար: Դուրս էկա,

[6] Մանկատան սաները ճաշարան գնում էին խմբերով՝ զույգ-զույգ շարք կազմած:

[7] 1920-1924 թթ.

տեսնեմ՝ հորեղբորս կնոջ քույրը՝ էրեխեն գիրկը, մտավ բակ: Գեղամն էր գրկին: Հարցրի. «Բա Տաթոն ո՞ւր ա»: Տաթոն հորեղբորս կինն էր: Լաց էղավ: Ասեց՝ Տաթոն չկա: Նստեցինք, խոսեցինք: Պատմեց՝ ինչքան դըժ-վար էր էրեխեքի համար առանց մոր: Երեք տղա էին՝ Եփրեմը, Գեղամն ու Սուրիկը: Հետո Սուրիկը հիվանդացավ ու մահացավ:

Հորեղբայրս Խաթունարխում սոխ էր մշակում: Մինչև ուշ գիշեր մնում էր հանդում: Մի անգամ կեսգիշերին տուն էկավ, տեսավ՝ ես ծրագը վառած, նստած եմ թախտի մոտ, Սուրիկն էլ՝ թախտին պառկած: «Ո՞նց ա»,– հարց-րեց ու նայեց թախտին: Սուս նստել էի: Շատ ջղայնացավ, սկսեց ինձ հանդիմանել, թե ինչի եմ նստել դիակի մոտ, ախր կվախենայի չէ՞... Էհ, էն վախտ մի էրեխա էլ ես էի, էլի...»:

Տղաները մեծացան, ընտանիքներ կազմեցին ու քույրիկ Սիրանուշի հետ արդեն ընտանիքներով էին հարազատություն անում՝ իրար տուն գնալ-գալ, իրար նեղ ու լեն օրի հասնել, կյանքում իրար ամեն տեղ նեցուկ լինել:

Եփրեմի կինը՝ Արեգնազը, մարդասեր, ձեռներեց ու էներգիայով լեցուն կին էր, իսկական կապող օղակ բոլոր բարեկամների համար: Չափա-զանց բարի, կամեցող, հասնող, բառի բուն իմաստով «շտապօգնություն»:

Արեգնազ մորաքույրը բուժքույր էր: Չտեսնված արհեստավարժ էր մաս-նագիտության մեջ, «աչքերը փակ վեննա էր մտնում»[8]: Ընդ որում՝ բառի բուն իմաստով «աչքերը փակ»՝ քնած, քանի որ «շաքար» ուներ, ու անընդ-հատ «քունը տանում էր»:

Արեգնազն ու Եփրեմը երեք զավակ ունեին՝ Անահիտը, Թագուշն ու Անդ-րանիկը: Նրանք ապրում էին Բարեկամության[9] պողոտայում: Այն տա-րիներին պողոտայով տրամվայ էր անցնում, ու Արեգնազ մորաքույրը հիմնականում տրամվայով էր երթևեկում: Հաճախ էր տրամվայում քնում

[8] Վեննա մտնել – ներերակային ներարկում կատարել

[9] Երևանի Բաղրամյան պողոտայի նախկին անվանումը

ու իր կանգառում իջնելու փոխարեն հասնում էր մինչև «տրամվի պարկ», որտեղ վագոնավարը նրան արթնացնում էր քնից:

* * *

Ռիմիկն ամուսնացավ ու հարս գնաց Աշտարակ: Նրա ամուսինն աշտարակցի էր, ավելի ճիշտ՝ Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղից: Այդ տարածաշրջանի բնակիչները, մեղմ ասած, առատաձեռնությամբ չէին փայլում: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ջահելները հաճախ էին Ռիմիկի ամուսնու հոգու հետ խաղում, պահանջում էին հակառակն ապացուցելու համար իրենց պատիվ տալ[10], ինչից (աներևակայելի է, բայց փաստ) նա միշտ խույս էր տալիս:

...1967 թվականի հուլիսի 8-ն էր, Ռիմիկի հարսանիքի օրը: Նրան հարս էին տանում Ոսկեվազ: Արեգնազի ավագ դուստրը՝ Թագուշը, ստանձնել էր հարնաքրոջ պատասխանատու գործը: Կոնդեցի Ժորան էլ աղջկա կողմից հարսանիքի հիմնական կազմակերպիչն էր: Պսակադրության արարողությունը հարսի տանն ավարտելով (այն տարիներին պսակադրությունը եկեղեցում, մեղմ ասած, չէր խրախուսվում)՝ հարսանեկան ավտոշարասյունը Երևանից շարժվեց դեպի Ոսկեվազ:

Բոլորն ուրախ-զվարթ, մի քիչ էլ գինովցած (Ռիմիկի հայրը՝ Մխոն, լավ սեղան էր գցել՝ «Կագոր» գինով ու տնական խաշլամայով), մեքենաների մեջ տեղավորված՝ ասում-խոսում, զվարճանում էին: Հարսի մեքենան կոնդեցի Ժորան էր վարում: Բացի հարսից ու փեսայից՝ մեքենայում տեղավորվել էր նաև հարնաքույր Թագուշը:

Նոր էին հասել Աշտարակ (Երևան-Ոսկեվազ ճանապարհին անցնում է Աշտարակ քաղաքով), երբ Թագուշը հանկարծակի վատացավ:

[10] Պատիվ տալ - հյուրասիրել

— Վա՛յ, մեռա, հասեք, օդը չի հերիքում, խեղդվում եմ,– մեքենայի մեջ տենդագին գոռում էր Թագուշն ու թափահարում թևերը:

Կոնդեցի Ժորան, որ ԳԱԶ 21[11]-ի ղեկին էր, մեքենան անմիջապես կանգ-նեցրեց, ու բոլորը սկսեցին Թագուշին ուշքի բերել: Մեկը ջուր էր բերում, մեկը ձեռքով օդն էր թափահարում: Արդեն ուզում էին շտապօգնություն կանչել, երբ կոնդեցի Ժորայի «Թագուշ ջան, ախր քեզ ինչ էղավ, այ քույրս, նոր լավ էիր» հարցին ի պատասխան հարսնաքույրը բացականչեց.

— Քցիբության[12] օդից եմ խեղդվում, էստեղ քցիբության հեղձուկ օդ է, չեմ կարողանում շնչել...

Նոր միայն հասկանալով, որ Թագուշն ակնարկում է աշտարակցիների ժլատության մասին տարածված կարծրատիպը, բոլորը թեթևացած շունչ քաշեցին, Թագուշին մի լավ նախատեցին իրենց լեղապատառ անելու համար, հետո միահամուռ քրքջացին:

[11] ԳԱԶ 21 Վոլգա – կուլտային մեքենա ԽՍՀՄ-ում, արտադրվել է 1956-1970 թթ.

[12] Քցիբ – կծծի, ժլատ

Օտվոցկի հայությունն ու Գոհարի Opel-ը

1990-ականներին համատարած գործազրկության պայմաններում մաքոքային առևտուրն իսկական փրկօղակ դարձավ շատերի համար: Նրանց մեջ էր նաև Գոհարը՝ տիկին Ռիմայի Հրաչիկ եղբոր դուստրը: Գոհարն ավարտել էր պոլիտեխնիկական ինստիտուտը, միկրոպրոցեսորի ծրագրավորող էր (այն ժամանակվա համար չափազանց արդիական ու պահանջված մասնագիտություն): Աշխատում էր չափազանց հեռանկարային ոլորտում՝ Հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի «Ալգորիթմ» հայկական գիտաարտադրական միավորումում: Առաջատար ինժեներ էր:

240 ռուբլի աշխատավարձ էր ստանում, նաև եռամսյակային լրավճարներ, սոցիալիստական մրցության հաղթողի պարգևավճարներ, 13-րդ աշխատավարձ: 1980-ականներին, երբ միջին աշխատավարձը երկրում 100-110 ռուբլի էր, սա աստղաբաշխական եկամուտ էր երիտասարդ մասնագետի համար: Բայց Խորհրդային Միության ու պլանային տնտեսության փլուզումից հետո միլիոնավոր բարձրագույնավարտ մասնագետների պես, Գոհարն էլ մնաց անգործ:

Պատերազմի, շրջափակման, էներգետիկ ճգնաժամի ու տնտեսության փլուզման հետևանքով հյուծված Հայաստանում այն տարիներին արտադ-

րություններ չէին բացվում, ներդրումներ չէին արվում, հետևաբար նոր աշխատատեղեր չէին ստեղծվում, եղածներն էլ այնքան ցածր աշխատավարձ էին առաջարկում, որ տրանսպորտին ու ընդմիջմանը հազիվ էր հերիքում:

Երկիրն ի վիճակի չէր վերապատրաստել գործազուրկ դարձած մի քանի հարյուր հազար մասնագետներին ու առավել ևս աշխատանք առաջարկել: Ամեն մարդ ինքն էր փորձում իր գլխի ճարը տեսնել: Մաքոքային առևտուրն այն տարիներին իսկական փրկություն էր: Մարդիկ ուղևորվում էին Լեհաստան, Չեխոսլովակիա, Հարավսլավիա՝ առևտրի:

Գոհարը, որ աչքաբաց, աշխարհ տեսած (մինչև ԽՍՀՄ փլուզումը հասցրել էր «Ինտուրիստի»[1] ու այլ ուղեգրերով լինել բազմաթիվ արտասահմանյան երկրներում՝ Հունգարիա, Չեխոսլովակիա, ԳԴՀ, Հունաստան, Եգիպտոս, եղել էր ԽՍՀՄ բազմաթիվ քաղաքներում), ձեռներեց ու նախաձեռնող աղջիկ էր, ընտրեց Լեհաստանն ու, կարելի է ասել, առևտրի ասպարեզում բավական հաջողակ գտնվեց:

Բայց լայն սպառման ապրանքները, որոնք մաքոքային առևտրի հիմքում էին, ժամանակի հետ թանկանում էին, երկրում դրանց առաջարկն աճում էր (որովհետև տարեցտարի ավելի ու ավելի շատ մարդիկ էին զբաղվում առևտրով), իսկ պահանջարկը մնում էր նույն մակարդակի վրա: Ու մաքոքային առևտուրը դարձավ շատ ծախսատար և քիչ եկամտաբեր: Առևտրականներն արդեն գերադասում էին տեղում առևտուր անել:

Լեհաստանում, օրինակ, մաքոքները խուրտով[2] ապրանք էին գնում Վարշավայի ստադիոնից, որն այն տարիներին մի ահռելի տոնավաճառի էր վերածվել բաց երկնքի տակ, ու վերավաճառում էին հեռավոր գյուղերում ու փոքր քաղաքներում, որոնցից յուրաքանչյուրում ամեն շաբաթ տոնավաճառներ էին լինում: Լեհական պետությունն ամեն կերպ խրախուսում

[1] Ինտուրիստ – ԽՍՀՄ արտասահմանյան զբոսաշրջության համակարգ

[2] Խուրտ – լեհերեն hurt բառն է, որ նշանակում է մեծածախ

էր նման «գործարար ակտիվությունը», քանի որ շոկային թերապիայի[3] պայմաններում այն խթանում էր ինքնազբաղվածությունը՝ զսպելով գործազրկության կտրուկ աճը երկրում:

...2004-ի մայիսն էր: Գոհարը մի շաբաթ Լեհաստանում էր: Ճիշտ է, նա հեռախոսով խոսում էր Ռիմիկ հորքուրի հետ, միշտ շեշտում էր, որ ինքը լավ է, իր հետ ամեն ինչ կարգին է, գործերն առաջ են գնում, բայց հորաքույրն այդ ամենին թերահավատորեն էր վերաբերվում:

Գոհարը շատ էր կապված Ռիմիկ հորաքրոջ հետ: Նրանք շատ մտերիմ էին՝ հարազատ քույրերի պես: Մշտապես շփվում էին միմյանց հետ, իրարից խորհուրդ հարցնում: Տիկին Ռիման անպայման ուզում էր իր աչքով տեսնել, թե որտեղ և ինչ պայմաններում է ապրում Գոհարը Լեհաստանում: Ու որոշել էր անպայման այցելել նրան:

Մայիսի 6-ին, Լոնդոնից վերադառնալիս, Մոսկվայում ճանապարհը շեղեց ու Երևան թռչելու փոխարեն (առանց Գոհարին այդ մասին տեղյակ պահելու) Բելոռուսական կայարանից որդու հետ գնացքով ուղևորվեց Վարշավա: Վարշավայից էլեկտրագնացքով հասան Օտվոցկ:

Տիկին Ռիման «էս կողմերում կռված էր»: Խորհրդային տարիներին կոմսոմոլի[4] ուղեգրով եղել էր Լեհաստանում: Նրան տարել էին նաև Օտվոցկ, որը հայտնի առողջարանային քաղաք է: Մազովիայի հարթավայրում, Վիսլայի ափին գտնվող այս փոքրիկ քաղաքի տարածքի մեկ քառորդը ծածկված է սոճու անտառներով: Տեղի օդը հայտնի է հակատուբերկուլյոզային հատկություններով: Օգտակար միկրոկլիման ու սոճիների բալասանաբույր օդը մշտապես ձգում են զբոսաշրջիկներին:

---

[3] Շոկային թերապիա կամ Բոլցերովիչի պլան - Լեհաստանի տնտեսության՝ կենտրոնացված պլանային կառավարման համակարգից շուկայականի արագ անցման տնտեսական ծրագիրը (1989)

[4] Կոմսոմոլ - Համամիութենական լենինյան կոմունիստական երիտասարդական միություն, ՀամԼԿԵՄ

2-րդ համաշխարհայինից առաջ Օտվոցկի բնակչության երեք քառորդը հրեաներ էին: Պատահական չէ, որ 1939-ին ֆաշիստները հենց այստեղ հիմնեցին հրեական խոշորագույն գետտոներից մեկը (մեծությամբ երկրորդը՝ Վարշավայից հետո):

...Օտվոցկի կայարանից տաքսի նստեցին և ուղևորվեցին շուկա: Գիտեին, որ եթե Գոհարն այնտեղ չլինի, տեղի հայերից կիմանան որտեղ գըտնել նրան: Ավելորդ է ասել, որ Ռիմիկ հորքուրի այցելությունն իսկական ֆուրոր առաջացրեց Օտվոցկի հայերի շրջանում: Նրանք բոլորն էլ հերթ էին կանգնել տիկին Ռիմային իրենց տուն՝ հյուրասիրության հրավիրելու համար: Ու այստեղ էլ տիկին Ռիման հաջողեցրեց մի մինի «տնօրինեք» կազմակերպել:

Առաջինն այցելեց Ալվարդին: Ալվարդը Գոհարի համակուրսեցին էր, սովետների ժամանակ աշխատում էր Երևանի միկրոէլեկտրոնիկայի գիտահետազոտական տեխնոլոգիական ինստիտուտում[5]: Աշխատանքը կորցնելուց հետո Գոհարի հետ գնացել էր Լեհաստան՝ մաքոքային առևտրի: Այստեղ նա ծանոթացել էր Յուրեկի (նրա անունը Երժի էր, բայց մտերիմները Յուրեկ էին ասում) հետ, ամուսնացել: Ապրում էին Շվիդերի իրենց ոչ մեծ, բայց հարմարավետ առանձնատանը:

Տիկին Ռիման շատ հավանեց Յուրեկին: Նա շատ կարդացած, լայն մտահորիզոնով, բազմակողմանի զարգացած մարդ էր: Յուրեկը բանասեր էր, հիանալի գիտեր ռուսերեն: Լեհաստանում խորհրդային կարգերի տապալումից հետո շատերի նման նա էլ անգործ էր մնացել: Բայց չէր վհատվել, «երդվյալ թարգմանչի» արտոնագիր էր ստացել ու զբաղվում էր նոտարական ու իրավաբանական թարգմանություններով: Վատ չէր վաստակում: Ռիմիկ հորաքրոջ հետ շատ արագ ընդհանուր լեզու գտավ:

Հաջորդ օրն էլ այցելեցին Էմմայի բազմանդամ ընտանիքին, ապա Փառանձեմին ու Սոնային՝ Կարչևում: Ալվարդն առաջարկեց մի քանի ժամ էլ հատկացնել Վարշավայում զբոսնելուն: Շրջեցին Հին քաղաքում, ճաշե-

[5] Научно-исследовательский технологический институт микроэлектроники (НИТИМ)

ցին Շուկայի հրապարակի գողտրիկ ռեստորանում, ապա գնացին Վարշավայի մշակույթի պալատ, որն այն ժամանակ քաղաքի ամենաբարձր շենքն էր: Անցյալ դարի կեսին կառուցվել էր Մոսկվայի ստալինյան բարձրահարկերի օրինակով, որպես ԽՍՀՄ նվեր լեհ ժողովրդին:

Շենքի 30-րդ հարկում (114 մետր բարձրության վրա) դիտահարթակ կար, որտեղից բացվում էր քաղաքի համայնապատկերը: Մոտեցան դրամարկղին: Ալվարդը խնդրեց երեք սովորական տոմս ու մեկ տոմս՝ թոշակառուների համար նախատեսված սակագնով: Տոմսավաճառը, որն ինքն էլ տարիքն առած կին էր, ուշադիր նայելով այցելուներին, քմծիծաղով եղկեց.

— Իսկ ձեզնից ո՞ր մեկն է թոշակառու:

Որքա՜ն մեծ եղավ նրա զարմանքը, երբ տեսավ տիկին Ռիմայի անձնագիրը:

Ներողություն խնդրեց ու անմիջապես մեկնեց թոշակառուի զեղչով տոմսը: Տիկին Ռիման այդ ժամանակ արդեն բոլորել էր 66-ը: Լեհաստանում կենսաթոշակային տարիքը վաթսունն էր:

Երկու ոչ լրիվ օրերի ընթացքում տիկին Ռիման հասցրեց ծանոթանալ Օտվոցկի գրեթե բոլոր հայերի հետ, նվերներ ընդունել ու նոր ծանոթություններ հաստատել: Բայց մի դիպված առանձնապես ցնցեց նրան ու ստիպեց, այնուամենայնիվ, անհանգստանալ Գոհարիկի լեհաստանյան կեցության համար:

Տիկին Ռիման իր կյանքում միայն մի անգամ էր մեքենայի ղեկին նստել՝ 1963-ի ամռանը: Խնամի Գարուշի «Մոսկվիչն» էր «փորձարկել»: Թարսի պես կոնուսն ու գազը շփոթել էր, ու քիչ էր մնացել՝ մեքենայով գլխիվայր շրջվեր: Մեքենա վարելու այս միակ ու անհաջող փորձը տիկին Ռիմային ստիպել էր ոչ միայն մեկընդմիշտ հրաժարվել մեքենա վարելու մտքից, այլև մի տեսակ անհասկանալի վախ էր ներարկել մեքենայի ղեկի նկատմամբ:

Սեփական փորձից ելնելով՝ նա վերապահումով էր վերաբերվում գեղեցիկ սեռի ներկայացուցիչներին ղեկ վստահելու գաղափարին:

Ու այստեղ՝ Օտվոցկում, նա, ի մեծ զարմանս իրեն, բացահայտեց, որ Գոհարն ավտոմեքենա է գնել ու վարում է: Շատ լավ իմանալով խնամի Գարուշի մեքենայի պատմությունն ու Ռիմիկ հորաքրոջ վերաբերմունքը՝ Գոհարն այդ «դետալը» թաքցրել էր հորաքրոջից: Բայց հիմա, երբ խնամքով թաքցված գաղտնիքն արդեն բացահայտված էր, Գոհարը ստիպված էր խոստովանել, որ մեքենան այստեղ շռայլություն չէ, այլ ընդամենը փոխադրամիջոց:

Գոհարը հորաքրոջ ճամպրուկները տեղավորեց մեքենայի բեռնախցում, հորաքույրը տեղ զբաղեցրեց հետևի աջ նստարանին, Գոհարն էլ նստեց ղեկին (Ռիմիկ հորաքույրը նրան ոչ մի կերպ չէր պատկերացնում ղեկին), միացրեց շարժիչն ու... Մեքենան հռնդյունով պոկվեց տեղից, սակայն առաջ գնալու փոխարեն հետ գնաց ու մեխվեց տեղում: Եթե Գոհարը կըտրուկ չարգելակեր, մեքենան կմխրծվեր փայտե ցանկապատի մեջ: Ռիմիկ հորաքույրը, իհարկե, չմատնեց իր ներքին խռովքն ու միայն ծիծաղեց: Մեքենան շարժվեց, ու շարունակեցին ճանապարհը:

...Երկու օր անց, համոզվելով, որ Գոհարն այստեղ «լավ մարդկանցով է շրջապատված», ու վտանգ չի սպառնում նրան, տիկին Ռիման հանգիստ խղճով հրաժեշտ տվեց Գոհարիկին ու գնացքով վերադարձավ Մոսկվա: Վարշավայի կենտրոնական կայարանում նրան ճանապարհում էին Գոհարն ու Ալվարդը: Միայն գնացքի մեջ որդուն խոստովանեց, որ շատ էր վախեցել, ու «էդ անտեր ավտոն» նրան այդպես էլ հանգիստ չէր տալիս:

Չերչիլի արձանի «պաշարյալները»

2004 թվականի մայիսի 27-ին Լոնդոնում օրն արևոտ էր ու տաք: Կարելի էր նստել փողոցի նստարանին, մեջքով սեղմվել արևից թեթևակի ջերմացած հենակին ու ըմբոշխնել գարնան ջերմությունը:

Գնացին Վեսթմինսթերյան պալատ: Պալատի շենքը՝ Թեմզա գետի ափին, հատկապես Էլիզաբեթի աշտարակը՝ հայտնի Բիգ Բենը, Լոնդոնի այցեքարտն է ու ճանաչված է ամբողջ աշխարհում: Ժամանակին Լոնդոն այցելած Նիկոլայ Առաջին ցարն այն անվանել է քարե երազ: Վեսթմինսթերյան պալատի մուտքի մոտ զբոսաշրջիկներ կային: Պարզվեց, որ Բրիտանական խորհրդարանի շենքը այցելուների համար բացվում է ցերեկը ժամը 3-ին:

Քաղցած էին: Հեռու գնալն իմաստ չուներ, որովհետև պալատի բացվելուն մնացել էր մի 40 րոպե: Բայց համբերել ևս անհնար էր, քանի որ էքսկուրսիան առնվազն երկու ժամ կտևեր, ու քաղցը զսպելը դժվար կլիներ: Որդին առաջարկեց արագ սննդի որևէ կետից բուտերբրոդ գնել ու հենց փողոցում ուտել:

Տիկին Ռիման փողոցում ուտելն անպարկեշտ էր համարում ու երբեք իրեն նման անքաղաքավարություն թույլ չէր տվել: Բայց վերջին երկու օրերին նկատել էր, որ Լոնդոնում՝ մետրոյում, փողոցում, նույնիսկ քայլելիս ինչ-որ բան ուտելը, առավել ևս խմելը սովորական երևույթ էր: Երևի հենց դա էր պատճառը կամ էլ սաստկացող քաղցը, որ հեշտությամբ տեղի տվեց (գուցե մի քիչ էլ հետաքրքրությունից դրդված): Մոտակա կրպակից հավի թևիկներ, կարտոֆիլ ֆրի ու Coca-Cola գնեցին, փողոցն անցան ու Խորհրդարանի հրապարակում[1] նստեցին Չերչիլի արձանից ոչ հեռու գտնվող նստարանին: Պատրաստվում էին բացել կարտոֆիլի փաթեթները, երբ աղմուկ լսվեց:

Հրապարակի դիմացի մայթից, Parliament Street կոչվող փողոցով խայտաբղետ շորերով կանանց ու ինչ-որ անհասկանալի տարազներով տղամարդկանց մի հոծ բազմություն՝ պլակատներով ու պաստառներով զինված, շեփորահարելով, ինչ-որ բառեր վանկարկելով, հարայ-հրոցով, աղմուկ-աղաղակով Դաունինգ սթրիթի կողմից մոտենում էր Խորհրդարանի հրապարակին: Երթևեկությունը կաթվածահար անելով՝ ամբոխը հատեց Great George փողոցն ու բոպեներ անց հայտնվեց հրապարակում:

Քրդեր էին: Երթ էին անում՝ պահանջելով ազատ արձակել Օջալանին: Պլակատների ու պաստառների վրա Օջալանի դիմապատկերն էր և անգլերեն ու քրդերեն գրություն. «Ազատություն Աբդուլլահ Օջալանին»: Հասնելով Չերչիլի արձանին՝ ամբոխի առաջնորդը, որ սրածայր բեղերով, քրդական ազգային տարազով միջին տարիքի, ցածրահասակ տղամարդ էր, հանկարծ կանգ առավ, շրջվեց դեպի իր հետևորդներն ու հավանաբար քրդերեն ինչ-որ հրահանգ տվեց: Ամբոխը նախ մեխվեց տեղում, ապա բոլորն անմիջապես նստեցին գետնին՝ շրջապատելով Չերչիլի արձանը, ու սկսեցին վանկարկել «Ազատություն Օջալանին»՝ միաժամանակ թափահարելով իրենց ձեռքերում պահած դրոշներն ու պլակատները:

[1] Խորհրդարանի հրապարակ (Parliament Square) - հրապարակ Լոնդոնի կենտրոնում, Վեսթմինսթերում, Վեսթմինսթերյան պալատի հյուսիս-արևմտյան մասում: Ձևավորվել է 19-րդ դարում:

Մայր ու որդի հայտնվեցին գետնին նստոտած հարյուրավոր ցուցարարների հոծ բազմության մեջ: Նույն պահին կարծես գետնի տակից հայտնվեցին երկու տասնյակի չափ լրագրողներ ու օպերատորներ: Տեսախցիկների տարբերանշաններից կարելի էր եզրակացնել, թե նրանք որ լրատվամիջոցներն էին ներկայացնում:

Ներկայացված էին աշխարհի գրեթե բոլոր խոշորագույն գործակալություններն ու հեռուստաընկերությունները՝ BBC, CNN, France Press, Deutsche Welle, Rai, Al Jazeera... Օպերատորները խմբվեցին ուղիղ այն նըստարանի դիմաց, որի վրա նստած էր տիկին Ռիման որդու հետ, ու սկսեցին նկարահանել: Չգիտես որտեղից ու ինչ հունարով հայտնվեցին նաև հարյուրավոր ոստիկաններ՝ մի մասը ձիերով (Լոնդոնի հայտնի հեծյալ ոստիկանությունը) ու, կրկնակի շրջանի մեջ վերցնելով գետնին նստոտած ցուցարարներին, շրջապատեցին տարածքը: Տիկին Ռիման որդու հետ հայտնվեց եռակի շրջափակման մեջ՝ օղակված ցուցարարներով ու զույգ շարք կազմած ոստիկաններով:

Կարտոֆիլի փաթեթներն ու Coca-Cola-ի շշերը ձեռքներին ակամա վեր կացան տեղից, փորձեցին ճեղքել շրջափակումն ու շարժվել դեպի Վեսթմինսթերյան աբբայություն[2] (դա միակ տրամաբանական ուղղությունն էր, քանի որ դիմացը լրագրողների խումբն էր, իսկ մյուս կողմում՝ բանուկ փողոցը): Բայց տրամաբանությունը չաշխատեց: Ցուցարարները տեղից շարժվելու մտադրություն չունեին. հակառակը, նրանք ավելի պիրկ հըպվեցին իրար ու, թևանցուկ անելով միմյանց, ավելի սեղմեցին պաշարման օղակը:

Մեկ էլ աջ կողմից բարձր քրքիջ լսվեց: Շրջվեցին: Ոստիկանները, նայելով այս տեսարանին ու հասկանալով, որ այս երկուսը քուրդ ցուցարարների հետ որևէ կապ չունեն, չէին կարողացել զսպել ծիծաղն ու անզուսպ քրքջում էին: Տեսարանն իսկապես զավեշտալի էր (հատկապես հաշվի առնելով, որ այն հեռարձակվելու էր մեծ լսարան ունեցող հեռուստաալիք-

[2] Վեսթմինսթերյան աբբայություն – Սուրբ Պետրոսի վանքային համալիր, գոթական ոճի տաճար Վեսթմինսթերում, Վեսթմինսթերյան պալատից արևմուտք

ներով)։ Մայր ու որդի շվարած կանգնել էին տեսախցիկների առջև՝ կարտոֆիլի փաթեթներով ու Coca-Cola-ի շշերով։ Երկու ոստիկան, անջատվելով ոստիկանական պատնեշից, գետնին նստոտած ցուցարարների խիտ շերտի միջով դանդաղ ճանապարհ բացելով, փորձեցին մոտենալ «պաշարվածներին»։

Տեսնելով ոստիկանների շարժումը, ցուցարարներն ավելի պիրկ սեղմվեցին միմյանց ու սկսեցին ավելի բարձր բղավել (հավանաբար մտածելով, որ ոստիկանները փորձելու են ցրել նստացույցը)։ Սկզբում ոստիկանները չէին կարողանում ճանապարհ բացել։ Նրանք բանակցությունների մեջ մտան ցուցարարների հետ՝ մատնացույց անելով երկու անսովոր մարդկանց, որոնք, Coca-Cola-ի շշեր ու հավի թևիկներ բռնած, շվարած կանգնել էին շրջանի կենտրոնում։

Ի վերջո, ոստիկաններն ինչ-որ կերպ ճանապարհ հարթեցին ցուցարարների միջով։ Հասնելով տիկին Ռիմային՝ խնդրեցին հետևել իրենց, ու նույն եկած ճանապարհով, դարձյալ մի կերպ ճանապարհ բացելով, ուղղվեցին դեպի ոստիկանական պատնեշը։ Հասնելով առաջին պատնեշին՝ նրանք տիկին Ռիմային որդու հետ առաջ մղեցին։ Պատնեշը բացվեց, երկուսին էլ դուրս թողեցին, ու նորից փակվեց։ Նույնը կրկնվեց նաև երկրորդ պատնեշի հետ։

Հայտնվելով ազատության մեջ՝ մայր ու որդի թեթևացած շունչ քաշեցին ու նոր միայն լիաթոք ծիծաղեցին՝ ձայնակցելով ոստիկաններին, որոնք իրենց քրքիջն այդպես էլ զսպել չկարողացան։

Հյուրանոց վերադառնալով՝ միացրին հեռուստացույցը։ Բոլոր ալիքներով հեռարձակվող նորությունների առաջին կադրերում իրենք էին, Չերչիլի բրոնզաձույլ արձանն ու այն նույն նստարանը, որի վրա նստած տիկին Ռիման կյանքում առաջին ու վերջին անգամ փորձում էր փողոցում ճաշել։ Այդպես՝ հավի թևիկները, տապակած կարտոֆիլն ու Coca-Cola-ի շշերը ձեռքին, նրանք հայտնվեցին աշխարհի բոլոր հեռուստաէկրաններին։

Հազարամյա քաղաքի պերճանքն ու թշվառությունը

Հնդկաստանի մայրաքաղաքն աշխարհի ամենամեծ ու աղմկոտ քաղաքներից մեկն է: Այստեղ շքեղությունն ու աղքատությունը, քաղաքակրթությունն ու միջնադարը գոյակցում են կողք-կողքի: Քաղաքի տեսարժան վայրերն են Կարմիր բերդը, Հնդկաստանի դարպասը, կառավարության նստավայրն ու բրածո տնակները, ճանապարհներ և անվերջանալի ցանկապատեր, որոնց հետևում թաքնված են բոլոր գեղեցիկ տները:

Հնդկաստանի բնակիչների 80 տոկոսը բուսակեր է: Եվ դա նույնիսկ կրոնի ու կենդանիների հանդեպ մեծ սիրո հարց չէ: Պարզապես շատերն այնքան աղքատ են, որ չեն կարող իրենց թույլ տալ միս ուտել: Ամենատարածված սնունդը բրինձն է. մի քանի ափսե՝ տարբեր համեմունքներով:

Այսօր Դելին քաոտիկ, բայց միաժամանակ հանգիստ կոնգլոմերատ է: Այն բարդ քաղաք է, որտեղ, ասենք, կովերը հաճախ շրջում են փողոցներով ու շենքերի բակերով: Միաժամանակ, Նյու Դելին Հնդկաստանի ամենազարգացած քաղաքն է: Կան շատ կանաչապատ ու կոկիկ

տարածքներ՝ եվրոպական դասավորությամբ: Այնուամենայնիվ, բնակիչ-ների մեծ մասն ապրում է խղճուկ կացարաններում:

Կեղտոտ, խճճված ու կախված էլեկտրալարերը, «առանց երկնքի» նեղ փողոցները, առանց դռների բնակարանները սովորական են: Այստեղ ոչ ոք չի վախենում գողությունից: Գողանալու բան չկա: Իհարկե, Դելիում հարուստ մարդիկ շատ կան, բայց նրանց փողոցում չես գտնի: Նրանք ապրում են իրենց ապարանքներում, ամուր դարպասների հետևում և շփվում են միայն իրենց «կաստայի» մարդկանց հետ: Հնդիկ մեծա-հարուստի տունն ավելի շատ նման է հնաոճ իրերի խանութի. ոսկե մե-տաղադրամներ, արծաթե գավաթներ, զենք ու զարդեր:

Քաղաքի շարքային բնակչի տունը, ընդհակառակը, ավելի շատ նման է գոմի. փնթի պատեր, մերկ հատակ, անկահույք սենյակ: Մարդիկ այստեղ ուտում ու քնում են հատակին: Նրանք սովոր են դրան:

Նախորդ դարավերջին որոշվեց կառուցապատել նոր տարածքներ՝ քա-ղաքի սահմաններն ընդլայնելու համար: Շինարարությունը սկսվեց Նյու Դելիի քաղաքային սահմաններից դուրս՝ Յամունա գետի ձախ ափին գտնվող լեռնաշղթայի մյուս կողմում: Տեղացիները պատմում էին, որ որո-շումը կայացվել էր այն հաստատուն համոզմունքի վրա, որ յուրաքանչյուր բնակիչ պետք է տանիք ունենա գլխավերևում:

Այս յուրօրինակ պնդումը փողոցներում ազատ շրջող կովերի ֆոնին տա-րօրինակ թվաց տիկին Ռիմային: Հետո պիտի պարզվեր, որ «տարօրի-նակ» բնորոշումը չափազանց մեղմ էր ասված:

2009-ի մայիսի 2-ն էր: Գիշերվա ժամը երկուսին Աերոֆլոտի օդանավը վայրէջք կատարեց Նյու Դելիի Ինդիրա Գանդիի անվան միջազգային օդանավակայանում: Խառնաշփոթում մի կերպ գլուխ հանելով՝ անցան անձնագրային ստուգումը, դուրս եկան փողոց ու ասես շոգեբաղնիքում հայտնվեցին:

+40 էր: Ուղևորվեցին Taj Palace հյուրանոց, որտեղ համարներ էին ամրագրել: Հյուրանոցը գտնվում էր Նյու Դելիի դիվանագիտական անկլավում՝ Չանակյապուրի կոչվող թաղամասում, որտեղ անտառային պարկի մոտիկությունն ապահովում է տարածքի օդի մաքրությունը (Նյու Դելին աշխարհի ամենաաղտոտված քաղաքներից է):

Հյուրանոցում ամեն ինչ տպավորիչ էր: Նախ ուշադրություն գրավեց անվտանգության մակարդակը: Բոլոր մեքենաները և առանց բացառության բոլոր այցելուներն ուշադիր ստուգվում էին: Անձնակազմը լավ պատրաստված էր և ուշադիր: Սենյակները շքեղ կահավորված էին հինդկական ավանդական մոտիվներով: Անգամ բարձերը կարելի էր ընտրել առաջարկվող տեսականուց՝ սագի բրդից, մանրաթելային, փրփրուն, բամբակե: Մեծ լողավազան կար, բանկետների և կոնֆերանսների սրահներ (պաշտոնական ընդունելությունների համար), հուշանվերների հարուստ խանութներ, շքեղ բարեր ու ռեստորաններ:

Սպիտակ, բարձր առաստաղով ճեմասրահում ամեն ինչ ձյունաճերմակ էր՝ մարմարե հատակն ու պատերը, սյուների տակ տեղադրված ոսկեզօծ բազմոցները, առաստաղից մինչև գետին ձգվող ոսկեթել, մետաքսե վարագույրները, ոսկեկանթեղ ջահերը: Հատակին փռված գորգերի խավն այնքան բարձր էր, որ քայլելիս թվում էր՝ ոտքերդ խրվում են փափուկ բրդի մեջ: Ճեմասրահի բոլոր անկյուններում դրված էին բուրմունք արձակող բամբուկե ձողեր: Դրանցից բարձրացող քաղցրաբույր ծուխը մեգի պես պատել էր սրահները՝ օդը ծանրացնելով, ինչը կարող էր գլխացավ, նույնիսկ սըրտխառնոց առաջացնել: Թվում էր՝ աչքերդ ուր որ է կարցունքոտվեն:

Տիկին Ռիման չէր կարող հպարտանալ սուր հոտառությամբ: Նա էլ մոր նման հաճախ էր գանգատվում, որ հոտ գրեթե չի առնում: Բայց այստեղ, մուտքից մի քանի քայլ անելով, հանկարծ կանգ առավ ու դիմելով որդուն գրեթե շշուկով (թեև շրջապատում ոչ ոք հայերեն չէր հասկանում) ասաց. «Հոտ չե՞ս առնում»: Որդին, որ ճեմասրահ ոտք դնելու պահից տարօրինակ զգացում ուներ, հիմա միայն հասկացավ դրա պատճառը. սրահով մեկ ինչ-որ թանձր հոտ էր տարածված:

Տեղացիները, որ դրան երևի սովոր էին, ոչ մի կերպ անհանգստության նշաններ ցույց չէին տալիս: Ուրախ-զվարթ իրենց գործն էին անում: Նրանց համար այդ հոտը երևի սովորական էր, նույնիսկ հաճելի: Ակնհայտ էր, որ, չնայած հյուրանոցի ճոխությանը, «կենսոլորտն» այստեղ կեցության համար, մեղմ ասած, պիտանի չէր: Պետք էր ինչ-որ բան մտածել:

Առավոտյան չորսին վերջապես տեղավորվեցին իրենց հատկացված համարներում: Ճամպրուկներն անգամ առանց բացելու՝ որդին նոթբուքը ձեռքն առավ ու սկսեց համացանցում այլ հյուրանոց որոնել: Նյու Դելիում հարմար հյուրանոց գտնելը դյուրին գործ չէր: Մի բան հաստատ էր. դեռ Երևանում, Հնդկաստանի դեսպանատանը, նրանց խիստ նախազգուշացրել էին՝ դիվանագիտական անկլավից դուրս ոչ մի ինքնուրույն քայլ: Չանակյապուրի թաղամասի տարածքում ծանոթ անվանումով միակ հյուրանոցը, որն առաջարկեց Google որոնողական համակարգը, Շերատոնն էր:

* * *

Նոր էր լուսացել, երբ որդին թակեց մոր սենյակի դուռը: Պարզվեց՝ մայրը չէր էլ պառկել քնելու, ննջել էր բազկաթոռին: Իրերն առանց բացելու թողեցին համարներում ու իջան ճեմասրահ: Կոնսիերժին խնդրեցին տաքսի կանչել: Տաքսու վարորդը շատ զարմացավ, երբ լսեց հասցեն, ուր պատրաստվում էին ուղևորվել, բայց լռեց ու մեքենան քշեց: Դարպասից դուրս եկավ, թեքվեց աջ, մի քանի հարյուր մետր առաջացավ ու, դարձյալ աջ թեքվելով, մտավ հարևան շենքի դարպասից ներս:

Պարզվեց, որ Maurya Sheraton-ը Taj Palace-ի կողքին էր, պարսպի մյուս կողմում: Այն ևս շրջապատված էր գեղատեսիլ, խնամված այգիներով, որոնք հաճելի լանդշաֆտային ֆոն էին ստեղծում: Դիմացը Հնդկաստանի պետական պաշտոնյաների առանձնատներն էին: Հյուրանոցի մենեջերին պատմեցին գլխներին եկածը, նկարագրեցին վիճակը՝ «դիվանագիտական» ձևակերպումներով փորձելով թաքցնել իրենց զգացումները:

Բրիտանացի մենեջերն ամենևին չզարմացավ: Պարզվեց, որ սա ոչ առաջին, ոչ էլ, վստահաբար, վերջին նման դեպքն էր: Բազմաթիվ եվրոպացիներ, գայթակղվելով Taj Palace-ի շքեղ (միանգամայն իրական) նկարագրություններով, հաճախ էին ամրագրում համարներ այդ հյուրանոցում: Սակայն, մտնելով հյուրանոց, մեղմ ասած՝ մտափոխվում էին ու տեղափոխվում հարևանությամբ գտնվող Շերատոն: Բրիտանացին լայն ժպտաց: Տեղեկանալով, որ ճամպրուկները թողել են Taj Palace-ի համարներում, խընդրեց համարների բանալիները, իր հյուրանոցում սենյակներ հատկացրեց՝ ասելով. «Մնացածի մասին մի՛ անհանգստացեք, մենք հոգ կտանենք»:

* * *

Դելի այցելող բոլոր զբոսաշրջիկներն անպայման մեկնում են նաև Ագրա քաղաք՝ դիտելու Թաջ Մահալի հայտնի դամբարանը, որը շատերն իրավամբ համարում են աշխարհի 8-րդ հրաշալիքը: Միայն ճարտարապետական կատարելությունը չէ, որ գրավում է տարբեր երկրներից ժամանած միլիոնավոր մարդկանց, այլև Թաջ Մահալի ստեղծման պատմությունը, որ նման է արևելյան հեքիաթի:

Թաջ Մահալը կառուցել է Մեծ մողոլների[1] դինաստիայի կայսր շահ Ջահանը կնոջ՝ Մումթազ Մահալի հիշատակին: Շահ Ջահանը մեծ հարեմ ուներ, սակայն շատ կապված էր Մումթազ Մահալին, որը կայսերը պարգևում է ութ որդի և վեց դուստր: Վերջին՝ 14-րդ երեխային ծնունդ տալու ժամանակ Մումթազը մահանում է: Մահից առաջ խնդրում է շահին, որ իր համար դամբարան կառուցի ու այլևս չամուսնանա: Կնոջ մահճի մոտ Ջահանը վշտից միանգամից ճերմակում է: Որոշ ժամանակ անց Ագրա-

[1] Մեծ մողոլներ - Հնդկաստանի տիրակալների դինաստիա (1526-1858): Օգտվելով Հյուսիսային Հնդկաստանի քաղաքական անկայուն վիճակից՝ Քաբուլի կառավարիչ Բաբուրը ներխուժել է Հյուսիսային Հնդկաստան և հիմնել Մեծ մողոլների պետությունը: Մողոլ անվանումն առաջացել է Հյուսիսային Հնդկաստանի և Միջին Ասիայի մահմեդականներին հնդիկների տված «մուղալ» անունից:

յում՝ Մողոլական կայսրության մայրաքաղաքում, սկսվում է Մումթազի դամբարանի շինարարությունը, որը տևում է 22 տարի:

...Մոտ երկու ժամ մեքենան վարելուց հետո վարորդը հանկարծ արգելակեց: Խցանում էր: Առջևում տասնյակ մեքենաներ էին կանգնած: Դելի-Ագրա ավտոմայրուղին փակ էր: Պարզվեց, որ ճանապարհի լայնությամբ ստորգետնյա խողովակ էին փոխում: Վարորդն ասաց. «Մի 40 րոպե կկանգնենք»: «Այլ ճանապարհ չկա՞» հարցին դժկամությամբ պատասխանեց, որ այլընտրանքային ճանապարհ կա գյուղի միջով, բայց խորհուրդ չտվեց շեղվել մայրուղուց: Պնդեցին: Երկար դիմադրելուց հետո վարորդը, ի վերջո, տեղի տվեց:

Արևը զենիթում էր: Դրսում անտանելի շոգ էր: Մեքենայի մեջ ջերմաչափը ցույց էր տալիս դրսի ջերմաստիճանը՝ +50:

Այն, ինչ տեսան գյուղում, չափազանց դժվար է նկարագրել: Տիկին Ռիման զարմացած (մի քիչ էլ սարսափած) շուրջն էր նայում: Տեսարանը, իսկապես, զարհուրելի էր: Հարյուրավոր կիսամերկ մարդկային մարմիններ բառի բուն իմաստով «լցված էին» նեղ ճանապարհի երկու կողմերում: Առաջին հայացքից դժվար էր հստակ որոշել, թե կիսանստած, կիսապառկած, ցնցոտիներով պատված այդ մարդիկ շնչո՞ւմ էին, թե՞ անշունչ մարդկային մարմիններ էին:

Ճանապարհի երկայնքով երևում էին ինչ-որ կառույցներ, որոնք շատ նման էին կիսակառույց բազմաբնակարան շենքերի՝ բետոնե հատակ, բետոնե առաստաղ և բետոնե սյուներ: Ուրիշ ոչինչ: Երկու-երեքհարկանի այդ շինությունների բոլոր հարկերում նույն տեսարանն էր՝ կիսանստած, կիսապառկած ցնցոտիներով մարմիններ, որոնք կենդանության նշույլ անգամ չէին դրսևորում: Քիչ հեռվում մի քանիսը բացեիբաց իրենց բնական կարիքներն էին հոգում: Հարևանությամբ մի խումբ էլ հենց փողոցի վրա նստոտած ճաշում էր: Շարժում ընդհանրապես չէր նկատվում:

Հանկարծ մեքենան կանգ առավ: Պարզվեց՝ նեղլիկ ճանապարհին մի մեծ կով է նստած, որն ամբողջովին փակել է ճանապարհի՝ առանց այն էլ չա-

փազանց նեղ երթևեկելի մասը: Վարորդը հրահանգեց պատուհանները չբացել ու մեքենայի դռների ավտոմատ փականները կողպեց: Հարյուրավոր զույգ պսպղան աչքեր միանգամից ուղղվեցին դեպի «տարօրինակ» մոխրագույն Mercedes-ը:

Բարեբախտաբար, չգիտես ինչ բնազդից դրդված, կովը դանդաղ բարձրացավ տեղից և ուղղվեց դեպի քիչ հեռու գտնվող գետը, որի ջուրն այնքան պղտոր ու կեղտոտ էր, կարծես քաղաքի կոյաջրերը միանգամից լցվում էին դրա մեջ (հետո պարզվեց՝ իրոք լցվում էին): Մեքենան դանդաղ շարժվեց: Հիմա միայն պարզ դարձավ, թե վարորդն ինչու էր ընդդիմանում ավտոմայրուղուց շեղվելու գաղափարին: Զբոսաշրջիկներն այս կողմերում ոչ թե հազվադեպ են լինում, այլ առհասարակ չեն հայտնվում: Օտարերկրացիները երկրում տեղաշարժվում են միայն ճեպուղիներով:

Վարորդը նաև պատմեց, որ Հնդկաստանում կանայք, չնայած անտանելի շոգին, աշխատում են քիչ ջուր խմել, որ զուգարան չգնան, քանի որ զուգարանները շատ հաճախ հանրային են ու տնից հեռու: Զուգարանների դռները, որպես կանոն, փակ չունեն, ու դրանց մոտ մշտապես խմբված է տեղի խուժանը: Կանայք նաև աշխատում են զուգարան գնալ խմբերով, ոչ ավելի, քան օրը մեկ անգամ՝ առավոտ կանուխ կամ ուշ երեկոյան: Տղամարդկանց պարագայում խնդրի լուծումը շատ ավելի դյուրին է՝ նրանք բնական կարիքները սովորաբար հոգում են հենց փողոցում: Ավելի քան 500 միլիոն մարդ Հնդկաստանում զուգարան չունի:

...Մինչև Ագրա ստիպված էին անցնել ևս մի քանի գյուղերի միջով: Ամենուրեք նույն տեսարանն էր՝ կիսաքաղց ու ցնցոտիավոր մարդկանց կուտակումներ, աղբ ու աղտեղություն, ծայրահեղ չքավորություն ու ավերակ հիշեցնող խղճուկ կացարաններ: Դիվանագիտական անկլավի ապշեցուցիչ ճոխության, շքեղ անդաստանների, կանաչ այգիների ու հոյակերտ ապարանքների հետ դրանք հազարամյա քաղաքի պերճանքի ու թշվառության լուռ, բայց պերճախոս վկաներն էին:

Կոնդեցի քույրերի ողբն ու Phonak լսողական սարքը

2013 թվականի հուլիսի վերջն էր, Երևանի բժշկական ուսումնարանում[1] դիմորդների գործերի ընդունելության ամենաեռուն շրջանը: Տիկին Ռիման արդեն 48-րդ տարին անընդմեջ ակտիվորեն ներգրավված էր այդ պատասխանատու գործին:

Առավոտյան արթնացավ սովորականի պես: Գնաց խոհանոց, սուրճը դրեց գազօջախին ու լվացարանի մոտ սուրճի բաժակներն էր լվանում, երբ իր սենյակից դուրս եկած ամուսինը ձայնեց.

— Կոֆեն եռում ա, կթափվի:

Արձագանք չեղավ: Տիկին Ռիման գազօջախից մեկ մետր հեռավորության վրա հանգիստ շարունակում էր իր գործը: Սուրճը եռաց, բարձրացավ ու ուժեղ թշշոցով թափվեց գազօջախին: Տիկին Ռիման ոչ մի կերպ չարձագանքեց:

[1] Երևանի № 1 պետական բազային բժշկական ուսումնարան, ՀԽՍՀ առողջապահության նախարարության միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն, այժմ՝ Երևանի հենակետային բժշկական քոլեջ

Ամուսինը փնթփնթալով մոտեցավ գազօջախին, անջատեց կրակն ու բարկացած ասաց.

— Ասեցի, չէ՞, կթափվի...

Արձագանք չեղավ:

Աղմուկի ձայնից մոտեցավ որդին:

— Ի՞նչ է պատահել,– հարցրեց:

Մայրը դարձյալ չարձագանքեց, բայց նկատելով որդուն, կարծես ոչինչ էլ չէր եղել, ասաց.

— Վա՛յ, զարթնե՛լ ես: Ես էլ կոֆեն էի բերում,– ու հանկարծ նկատելով, որ սուրճը թափվել է, ավելացրեց,– էս ե՞րբ թափվեց: Կողքին կանգնած չեմ նկատել:

Որպեսզի անց պարզվեց, որ տիկին Ռիման ոչինչ չի լսում:

«Նաիրի» բժշկական կենտրոնում ձայնամեկուսիչ գերժշգրիտ աուդիոմետրով (այն տարիներին նման սարք կար միայն «Նաիրի» բժշկական կենտրոնում) չափումները հաստատեցին, որ տիկին Ռիման ամբողջությամբ կորցրել է լսողությունը:

Նրա ձախ ականջն ի ծնե չէր լսում: Դեռ ծննդատանը ականջի բորբոքման հետևանքով ձախ ականջը խլացել էր: Բայց այդ արատը երբեք էլ չէր խանգարել նրա լիարժեք կյանքին: Կողքինները լսողության շեղումներ չէին նկատել: Հիմա կարծես թե աջ ականջն էլ կրկնում էր ձախի ճակատագիրը, միայն այս անգամ՝ ակնհայտ հետևանքներով:

«Էրեբունի» բժշկական կենտրոնում անցկացված հետազոտության եզրակացությունը հստակ էր. ուղեղի թաղանթի բորբոքում: Նշանակեցին

գլխուղեղի անհապաղ վիրահատություն: Պարզ էր, որ լսողությունն այլևս չի վերականգնվելու: Այժմ խնդիր էր դրվում փրկել նրա կյանքը:

«Դիագնոստիկ» բժշկական կենտրոնում ախտորոշումը հաստատեցին: Էլի մի քանի տեղ դիմեցին. պատասխանը նույնն էր՝ անհապաղ վիրահատություն: Բայց, դե, գլխուղեղի վիրահատությունը հանաքմասխարություն[2] չէր, առավել ևս, որ դրական արդյունքն ամենևին էլ երաշխավորված չէր: Որոշվեց մեկ անգամ էլ ուսումնասիրություն անցնել Գերմանիայում:

Գերմանիա մեկնելու նախօրեին նրան տեսակցության եկան կոնդեցի Ժորա մորեղբոր երկու դուստրերը՝ Նարինեն ու Գայանեն: Համոզվելով, որ Ռիմիկ հորաքույրն այլևս ոչինչ չի լսում, նրանք դեմ-դիմաց տեղավորվեցին ճաշասենյակի բազմոցին, մեկական թաշկինակ հանեցին ու կարծես դիրիժորի անտեսանելի փայտիկի նշանով այնպիսի ողբ կապեցին, որ ձայները փողոցում լսվում էին (թեև բնակարանը գտնվում էր հինգերորդ հարկում):

Բարեբախտաբար, Ռիմիկ հորաքույրն այդ պահին խոհանոցում սուրճ էր պատրաստում ու նրանց չէր տեսնում: Ձայներն էլ նրան չէին հասնում, քանի որ ոչինչ չէր լսում: Տիկին Ռիմայի ամուսինը, որ, աղեկտուր լացուկոծի ձայներից սարսափած, սենյակ մտավ, սաստեց քույրերին ու հորդորեց չխորացնել Ռիմիկի՝ առանց այն էլ խիստ փոթորկված հոգեկան ներաշխարհին ու իրավիճակը չսրել: Անսալով նրա հորդորին՝ քույրերը լռեցին, սրբեցին արցունքները, թաշկինակները թաքցրին գրպաններում ու, կարծես ոչինչ էլ չէր պատահել, գնացին խոհանոց՝ օգնելու Ռիմիկ հորաքրոջը:

...Գերմանացի պրոֆեսորն ուշադիր լսեց տիկին Ռիմայի գանգատը, օտոսկոպով զննեց ականջի խոռոչն ու գերմաներեն կարճ հրահանգներ տվեց բուժքրոջը: Ապա, դիմելով տիկին Ռիմային, անգլերեն ասաց.

[2] Հանաքմասխարություն - թեթև կատակ

— Միջինականջի բորբոքում է: Լուրջ բան չկա: Թմբկաթաղանթն է այտուցված: Ներարկում կանենք, կանցնի: Կարծում եմ՝ երեք ներարկումը բավարար կլինի:

Տիկին Ռիման, իհարկե, ոչինչ չլսեց, բայց պրոֆեսորի ժպտացող դեմքն ու խոսքի հանդարտ տոնը նրա մեջ հույս արթնացրին:

Հուլիսի 29-ին, առաջին իսկ ներարկումից հետո, լսողությունը մասամբ վերականգնվեց: Երրորդ ներարկումից հետո աջականջի լսողությունն ամբողջությամբ վերականգնված էր:

Չլսող ձախ ականջի լսողությունը կոմպենսացնելու և առողջ աջ ականջի լսողության՝ տարիքային խնդիրներով պայմանավորված թուլացումը լրացնելու համար տիկին Ռիման պրոֆեսորի խորհրդով սկսեց հատուկ լսողական սարք կրել: Աջ ականջի մեջ տեղադրեցին Phonak շարժական (հանովի-դնովի) լսողական ապարատ, իսկ չլսող ձախ ականջի մեջ՝ ալեհավաք, որն աջ կողմից կլանում էր ձայնային ալիքներն ու փոխանցում ձախ ականջում տեղադրված լսողական սարքին: Դրանք երկուսն էլ փոքր էին, մազերի տակից ամենևին չէին երևում, ուստի անտեղյակ մարդը երբեք չէր կռահի, որ տիկին Ռիման լսողական սարքեր է կրում:

Աչքերի վիրահատությունն ու «Քյոնիգսհոֆի» մետրոտելի զարմանքը

2014 թվականի հոկտեմբերն էր: Տիկին Ռիման բողոքում էր տեսողությունից: Առանց ակնոցի հեշտությամբ կարդում էր, բայց 2-3 մետր հեռավորության վրա լավ չէր տեսնում: Մարդիկ ու առարկաներն աղոտ էին երևում:

Աչքերի ուսումնասիրությամբ ախտորոշվեց կատարախտ, ու նշանակեցին վիրահատություն: Ականջի «ախտորոշման» դառը փորձն աչքի տակ ունենալով՝ որոշեցին հերթական անգամ փորձության չենթարկվել ու լազերային վիրահատությունն իրականացնել Գերմանիայում:

Հոկտեմբերի 12-ին զավակների հետ ժամանեց Մյունխեն: Իջևանեցին «Կառլսպլաց» կամ «Շտախուս» կոչվող հրապարակում գտնվող «Քյոնիգսհոֆ» հյուրանոցում:

19-րդ դարում կառուցված այս հյուրատունը ժամանակին յուրօրինակ հավաքատեղի էր գիտնականների ու մտավորականների համար, որոնց Մյունխեն էր հրավիրում Բավարիայի Մաքսիմիլիան 1-ին Ջոզեֆ թագավորը: Հյուրերի մեջ էին գրողներ Փոլ Հեյզը, Էմանուել Գեյբելը, Ֆրիդրիխ

Բոդենշտեդը, արվեստի պատմաբան և բանաստեղծ Ադոլֆ Ֆրիդրիխ ֆոն Շակը, պալատական թատրոնի տնօրեն Ֆրենսիս ֆոն Դինգելշտեդտը:

1938-ին հյուրանոցը ձեռք էին բերել Կարլ և Աննա Գեյզելները: Երկուսն էլ սկսել էին որպես պանդոկապան՝ Oktoberfest փառատոնի գարեջրի վրաններում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ շենքը հիմնովին ավերվել էր, բայց Գեյզելների ընտանիքը վերակառուցել էր այն, ու 1955 թվականից «Քյոնիգսհոֆ» հյուրանոցը դարձյալ սկսել էր գործել՝ ժամանակի ընթացքում դառնալով Մյունխենի յուրօրինակ այցեքարտերից մեկը[1]:

Ալպյան նախալեռներում փռված այս քաղաքն անգլախոս զբոսաշրջիկները համարում են Toytown (խաղալիքների քաղաք), բայց գերմանացիներն այն կոչում են «Միլիոնենդորֆ», որը նշանակում է «մեկ միլիոն բնակիչ ունեցող գյուղ»:

...Օրը մռայլ էր, ու անձրև էր տեղում: Երեկոյան կողմ անձրևը սաստկացավ. երկնքից կարծես դույլերով ջուր էր թափվում: Դրսում ուժեղ քամի էր: Այդ եղանակին հյուրանոցից դուրս գալն անխոհեմ քայլ կլիներ: Բայց քաղցը պարտադրում էր մի բան անել: Որոշեցին ճաշել հյուրանոցի ռեստորանում, որը Միշլենի աստղ ուներ ու հայտնի էր յուրօրինակ ճաշացանկով, շեֆ-խոհարարն էլ՝ Մարտին Ֆաուսթերը, նորարարական մոտեցումներով:

Ավստրիացի Ֆաուսթերն ուսանել էր հայրենի Շտիրիա նահանգում՝ Լեոբենի Landgasthof Gösser Bräu գարեջրատանը, փորձ էր կուտակել՝ ճամփորդելով աշխարհով մեկ: 2004-ին ստանձնել էր «Քյոնիգսհոֆի» ռեստորանի շեֆ-խոհարարի պաշտոնը, և նրա ստեղծած ճաշատեսակները վաստակել էին 18 Gault et Millau միավոր և Միշլենի մեկ աստղ:

---

[1] Քովիդ-19 համավարակը կործանարար դարձավ հյուրանոցային բիզնեսի համար: Բազմաթիվ հյուրատների նման «Քյոնիգսհոֆը» ևս վաճառվեց, ապա հիմնահատակ քանդվեց: 2023-ին նույն տեղում նոր բարձրահարկ հյուրանոց կառուցվեց:

Պատվիրեցին տավարի սթեյք, վայրի բադ ու վահանաձուկ:

Չնայած «լավ եփելու» բոլոր հորդորներին՝ միսը, այնուամենայնիվ, կիսահում էր: Ինչ-որ խիստ բացառիկ հեղինակային տեխնոլոգիայով պատրաստված բադի կրծքամիսն էլ մի տեսակ դոնդողանման զանգվածով էր պատված: Դե, իսկ ձուկն այնքան էր տուժել սոուսի ազդեցությունից, որ ձկան դասական համը չէր զգացվում:

Տիկին Ռիման կիսաքաղց դուրս եկավ ռեստորանից: Դուստրը՝ Մարինեն, առաջարկեց գնալ խանութ, գնել թարմ հաց, պանիր, վարունգ ու լոլիկ: Այդպես էլ արեցին: Հետո հյուրանոցի համարում տիկին Ռիման հաճույքով ճաշակեց հաց ու պանիրը վարունգի ու լոլիկի հետ և պառկեց քնելու:

Հետագա տարիներին տիկին Ռիման բազմաթիվ անգամներ այցելեց Մյունխեն, ու, որքան էլ տարօրինակ էր, «համեղ սնվելու» խնդիրն այս քաղաքում լուծվեց չափազանց պատահաբար ու կարծես ինքնաբերաբար:

Մի անգամ, Neuhauser Strasse հետիոտնային փողոցի վրա գտնվող Սբ Միքայելի տաճարից (ամեն անգամ Մյունխեն այցելելիս տիկին Ռիման պարտադիր մտնում էր Սբ. Միքայելի տաճար ու երեք մոմ վառում) դուրս գալիս, մեղմ անձրև սկսվեց: Մի հարյուր քայլ հազիվ էին հեռացել, երբ անձրևը սաստկացավ ու միանգամից դարձավ հորդառատ: Անձրևից պատսպարվելու համար վազելով մտան դիմացի մայթին գտնվող Augustiner գարեջրատուն:

Մյունխենը համարվում է Գերմանիայի գարեջրի մայրաքաղաքը: Քաղաքում գործում են 20-ից ավելի գարեջրագործարաններ, 22 աշխարհահռչակ գարեջրային ռեստորաններ, որոնցից հնագույնը՝ Augustiner-ը, 1328-ին հիմնել են ավգուստինյան միաբանության վանականները:

Ամպերը գոռգոռում էին, երկնքում կայծակ էր ճայթում, հորդառատ անձրևը թափվում էր առանց դադարի:

Պարզվեց, որ Augustiner գարեջրատան միջնամասում, օվալաձև, ապակե գմբեթանման ծածկով Seashell կոչվող գողտրիկ սրահում, նաև ռեստորան կա՝ հնառոճ կահավորանքով, սպիտակ մետաքսե ծածկոցներով պատված սեղանիկներով ու ավանդական բավարական ճաշացանկով:

Այստեղ ամենուր պատերից կախված էին եղջերուների գլուխներ: Եղջյուրների «ոսկե» փայլը ժամանակի հետ խամրել էր, բայց վեհաշուք, խեցեպատ սրահը, որը կապում էր գարեջրատան ներքին բակն ու Կանաչ սեղանատունը, ամենևին էլ չէր կորցրել երբեմնի հմայքը: Սրահի ապակե գմբեթն իր յուրահատուկ կառուցվածքով ու գունազարդմամբ իսկական ճարտարապետական գլուխգործոց էր: Բացառությամբ որոշ աննշան դետալների՝ ծովախխունջներով պատված Seashell սրահն ամբողջությամբ պահպանել է 1897 թվականի իր նախնական տեսքը: Սա Էմանուել ֆոն Զեյդլի մոդեռն ճարտարապետության Art Nouveau ոճի առաջին գործն է, որն աչք է շոյում յուրօրինակ դեկորատիվ ձևավորմամբ:

Տեղավորվեցին հինավուրց ռեստորանի աջակողմյան, կիսաառանձնացված հատվածում: Մատուցողը բերեց բազմալեզու ճաշացանկն ու ներկայացրեց ավանդական կերակրատեսակները: Պատվիրեցին վիեննական շնիցել՝ տապակած կարտոֆիլով, բավարական ոճով պատրաստված տավարի խաշլամա ու գուլյաշ: Բոլոր ճաշատեսակներն էլ (հատկապես հատուկ եղանակով տապակած կարտոֆիլը) շատ դուր եկան տիկին Ռիմային: Դրանից հետո Մյունխենում գտնվելիս ամեն անգամ գնում էր Augustiner գարեջրատան ռեստորան:

* * *

...Հաջորդ օրն առավոտյան նշանակված էր աջ աչքի վիրահատությունը, որն անցավ առանց բարդությունների: Տևեց 15 րոպե:

Հյուրանոցի փորձառու մետրդոտելը, տեսնելով տիկին Ռիմային աչքի վիրակապով, մոտեցավ, իր ծառայություններն առաջարկեց, հարցուփորձ

արեց վիրահատության ընթացքի մասին ու մտահոգ ավելացրեց. «Դե, երկրորդ աչքն էլ երևի կվիրահատեն երկու շաբաթից: Սովորաբար երկշաբաթյա դադարը երկու վիրահատությունների միջև նվազագույն հնարավոր տևողությունն է»:

Որքան մեծ եղավ մետրդոտելի զարմանքը, երբ հաջորդ առավոտյան տեսավ, որ տիկին Ռիմայի երկու աչքն էլ վիրակապով են:

— Այ, թե խիզախ կին է, այ խիզախություն եմ ասել: Ամեն տղամարդ չէ, որ կհանդգնի երկու օրում երկու վիրահատության ենթարկվել,– մի տեսակ ակնածանքով ասաց փորձառու մետրդոտելը, որն իր կյանքի ու մյունխենյան բարձրակարգ այս հյուրանոցում ծառայության տասնամյակների ընթացքում շատ բան էր տեսել:

Տիկին Ռիման այդ ժամանակ 76 տարեկան էր:

Կոպենհագենի ջրահարսն ու Հյուսիսային ծովի փոթորիկը

Նախօրեին տեղացած հորդառատ անձրևից հետո Կոպենհագենում բացառիկ արևոտ, պարզ օր էր: Քաղաքը փռված է ծովափնյա հարթավայրում, որը շրջապատված է զարմանահրաշ բազմաձև, բազմագույն շենքերով ու տնակներով կառուցապատված բլուրներով:

Նույնիսկ եթե չեք սիրում Անդերսենի հեքիաթները, և «Փոքրիկ ջրահարսը» ձեզ չի զարմացնում, միևնույն է, կվայելեք Կոպենհագենը: Պատահական չէ, որ հենց Դանիայի մայրաքաղաքին բաժին հասավ Սկանդինավիայի առավել մարդաշատ քաղաքի կարգավիճակը: Այն Եվրոպայի զբոսաշրջային ամենաթեժ ուղղություններից մեկն է: Այստեղ գրեթե չկան ժամանակակից բարձրահարկ շենքեր, բայց կան եզակի փողոցներ, այգիներ, գողտրիկ շինություններ, որոնցով հիանում են զբոսաշրջիկները:

2016 թվականի հուլիսի 25-ն էր: Եղանակը տաք էր: Կապույտ, անամպ երկնքից շողացող արևի ճառագայթները ջերմացնում էին օդը, իսկ Հյուսիսային ծովից փչող մեղմ հովիկը հաճելի զովություն էր պարգևում: Մարդիկ զբոսնում էին ծովափին ու առափնյա ծառուղիներում:

Փոքրիկ ջրահարսի հայտնի արձանիկը ծովից տեսնելու համար իրականացրած ծովային զբոսանքն ավարտելով՝ որոշեցին մի փոքր զբոսնել Դանիայի հեքիաթային մայրաքաղաքի փողոցներով: Քայլում էին առանց որոշակի երթուղու: Հեռվում մոդեռնիստական ոճով կառուցված հետիոտնային կամուրջ նկատեցին ու քայլերն ուղղեցին հենց այդ ուղղությամբ: Տարօրինակ էր, բայց բանուկ ծառուղու՝ կամրջին հարող հատվածում մարդ չկար, որդին որոշեց մորը լուսանկարել կամրջի ֆոնին:

Տիկին Ռիման լուսանկարվել չէր սիրում: Ամեն անգամ նրան դժվարությամբ էին համոզում լուսանկարվել: Երբեմն էլ ուղղակի առանց հարցնելու «չխկացնում էին» լուսանկարչական ապարատը:

Այս անգամ էլ մի կերպ համաձայնեց լուսանկարվել: Կանգնեց դեմքով դեպի արևը, որ ճառագայթները չփչացնեն կադրը: Որդին, մի քանի քայլ հեռանալով, լուսանկարչական ապարատի օբյեկտիվը մոտեցրեց աչքին, որ նկարի: Մեկ էլ նույն պահին թեթև գվվոց լսվեց, ու, բառի բուն իմաստով, գետնի տակից տասնյակ շատրվաններ միանգամից ցայտեցին: Ջրի մարդաբոյ շիթերն ակնթարթորեն շրջապատեցին տիկին Ռիմային, ու նա քարացավ տեղում: Մի անզգույշ շարժում, ու կհայտնվեր ցնցուղի տակ: Պարզվեց, որ ծառուղու այդ հատվածում «ստորգետնյա» շատրվաններ կային: Մարդիկ գիտեին դա ու զբոսնելիս այդ հատվածը շրջանցում էին:

Հարթ (կամ ինչպես ընդունված է կոչել նաև չոր, ստորգետնյա կամ հետիոտնային) շատրվանները նորագույն տեխնոլոգիաները ժամանակակից քաղաքային ճարտարապետության հետ համադրելու վառ օրինակ են: Այսօր դրանք ամենուր են, բայց այն շրջանում նոր-նոր էին կիրառվում:

Շատրվանները դասավորված էին զուգահեռ շարքերով, որոնց միջև բացատներ էին: Տիկին Ռիման էլ, չգիտես թե ինչ հրաշքով, կանգնել էր հենց այդ բացատներից մեկի վրա ու չէր թրջվում:

Քիչ հեռվից ծիծաղ լսվեց: Բանվորներ էին, որ շատրվանների կառավարման վահանակում նորոգման աշխատանքներ էին իրականացնում ու որոշել էին փորձարկել իրենց աշխատանքի արդյունքը՝ միացնելով

շատրվանները հենց այն պահին, երբ տիկին Ռիման պատրաստվում էր լուսանկարվել:

Նկատելով բացատի վրա կանգնած կնոջը՝ տասնյակ ցայտող շատրվաններով շրջապատված, նրանք ակամա սկսել էին ծիծաղել: Բանվորներն անմիջապես անջատեցին շատրվանները, ներողություն խնդրեցին առանց նախազգուշացման ջուրը միացնելու համար, բայց տիկին Ռիմայի վրա ոչ մի կաթիլ ջուր չէր ընկել: Նա «ջրից միանգամայն չոր դուրս եկավ» ու հանգիստ շարունակեց ճանապարհը:

* * *

Հաջորդ օրը, երեկոյան, գնացին նավահանգիստ, նստեցին Pearl Seaways զբոսանավն ու ուղևորվեցին Օսլո: Տաք եղանակն ու անամպ երկինքը խաղաղ նավարկություն էին խոստանում:

178 մ երկարություն ու 33 մ լայնություն ունեցող զբոսանավը կարող է տեղափոխել 1832 ուղևորի: Pearl Seaways զբոսանավով ծովային ճամփորդությունը նման է զբոսանքի միջին վիճակագրական Եվրոպական քաղաքում. պատկերացրեք ձեզ՝ հետիոտնային փողոցով քայլելիս: Նավի կենտրոնում խանութներ են, սրճարաններ ու հրապուրիչ ռեստորաններ:

Առօրյա կյանքը մնում է հետևում այն պահին, երբ ոտք եք դնում նավի վրա: Այստեղ ձեզ դիմավորում են պրովանսալյան տրուբադուրները, մենեստրելներն ու ձեռնածուները, որոնք ջանք ու եռանդ չեն խնայում զբոսաշրջիկներին զվարճացնելու համար: Նավապետի բարեհամբույր օգնականը ժպտալով ուղևորներից տոմսեր է խնդրում, լուսանկարիչն էլ իր եռոտանու վրա տեղակայված ֆոտոապարատով հավերժացնում է ուղևորների մուտքը զբոսանավ:

Բարձրանալով տախտակամած՝ շուրջը նայեցին: Ընդարձակ տախտակամածի արևմտյան հատվածում սպիտակ նստարաններ էին, լողավազան՝ ջակուզիով: Արևելյան մասում Երկնային բարն (Sky bar) էր՝ մոմլաթե սեղանիկներով: Լողավազանում մարդ չկար՝ ցուրտ էր, բայց, այ, Երկնային բարում մեկական գավաթ տաք «ցեյլոն» թեյ վայելելը, իհարկե, լազաթ[1] տվեց:

Սկզբում ամեն ինչ լավ էր, փրփրուն ալիքները համաչափ բախվում էին նավի կողերին: Նավը հանդարտ ճոճվում էր ծովի ալիքների վրա: Ոտքերի տակ այդ ճոճքը զգալը, իհարկե, անսովոր էր, բայց դրան էլ շատ արագ վարժվեցին:

Նավը խարիսխը բարձրացրեց ու դուրս եկավ բաց ծով: Այս կողմերում հուլիսին ուշ է մթնում: Ժամը յոթն էր, բայց արևը դեռ փայլում էր կապույտ, անամպ երկնքում: Նավամատույցի վրա արդեն ցուրտ էր: Նավն արագություն էր հավաքում՝ ժամում մի քանի հանգույց ավելացնելով, քամին սաստկանում էր:

Մթնշաղին քամին այնքան ուժեղ էր, որ նավամատույցի վրա հնարավոր չէր կանգնել: Ներս գնացին, ճաշեցին ու պատուհանից հետևում էին, թե ծովն ինչպես է ալիքվում: Ալիքները մեծանում էին մեծ արագությամբ:

Տիկին Ռիմայի նավասենյակը 12-րդ հարկում էր, որդունը՝ 3-րդ: Որդուն բարի գիշեր մաղթելով՝ տիկին Ռիման պառկեց քնելու: Որդին իջավ իր նավասենյակ, որի պատուհանից ավելի փոթորկուն էր թվում ալիքվող ծովը: Հանկարծ երկինքը մթնեց, քամին սաստկացավ: Ծովը մոլեգնեց: Հորդառատ անձրև սկսվեց: Ծովի գույնը կարծես փոխվեց: Ալեկոծությունը վերածվեց փոթորկի:

Նավի լուսավորությունը մարեց, ու մարդիկ մթության մեջ ելք էին փընտրում հսկայական զբոսանավի լաբիրինթոսներում: Հսկա ալիքները մեծ ուժով բախվում էին նավակողին՝ տասնյակ մետրերով ջրի սյուներ բարձ-

[1] Լազաթ - հաճույք, բավականություն

րացնելով: Քամին սաստկանում էր: Սպիտակաբաշ, վիթխարի ալիքներն ամբողջովին ծածկել էին հորիզոնը, ամենուր լսվում էր քամու սարսափազդու ոռնոցը: Մթնոլորտային ճնշումն ընկնում էր: Ալիքներն անխնա հարվածում էին նավի կողերին՝ այսուայնկողմ ճոճելով: Ալիքներն ավելի զորեղ էին դառնում, նավի ճոճքն ավելի էր սաստկանում: Կանաչավուն-մոխրագույն մշուշն այնպես էր ծածկել ամբողջ երկինքը, որ նույնիսկ լուսինը չէր երևում:

Որդին որոշեց բարձրանալ ու պարզել, թե ինչպես է տիկին Ռիման: Նավասենյակից դուրս եկավ միջանցք, բայց պարզվեց, որ նեղ միջանցքով քայլելն այդքան էլ դյուրին գործ չէր: Այդ պահին լսվեց նավի շչակների ձայնը: Տագնապի ազդանշան էր: Բարձրախոսով երեք լեզուներով ուղևորներին հորդորում էին մնալ իրենց սենյակներում ու միջանցք դուրս չգալ: Անհանգստացավ:

Քայլերն ուղղեց դեպի նախասրահ, բայց ալիքի հուժկու հարվածից նավն այնպես ճոճվեց, որ, եթե միջանցքի պատի երկայնքով ձգվող բազրիքից չբռներ, հաստատ կընկներ ու կգլորվեր մինչև նախասրահ:

Չափազանց դժվար է հավասարակշռություն պահպանել, երբ նավը մի կողմի վրա թեքվում է մինչև երեսուն աստիճան, վայրկյաններ անց՝ նույնքան մյուս կողմի վրա:

Բազրիքից բռնած մի կերպ հասավ նախասրահ, բայց պարզվեց, որ վերելակներն անջատված են (հրդեհային անվտանգության կանոններով էր պայմանավորված): Ահռելի զբոսանավը ծովի վրա տաշեղի նման ճոճվում էր այսուայնկողմ: Հողմախառն քամին սաստկանում էր, իսկ ճոճի ամպլիտուդը՝ մեծանում:

Միայն մի տարբերակ կար՝ աստիճաններով: Բազրիքներից բռնելով, ամբողջ մարմնով այսուայնկողմ ճոճվելով, սկսեց մագլցել վեր: Վերևի հարկերում գորգապատ աստիճանները նեղանում էին, ինչը հնարավորություն էր տալիս բռնվել միաժամանակ երկու կողմերի բազրիքներից: Ընկնելով ու բարձրանալով՝ մի կերպ հասավ բաղձալի 12-րդ հարկ:

Այստեղ ճոճքն ավելի էր զգացվում: Ճոճքի ամպլիտուդը նավի այս մասում մետրերի էր հասնում: Երբեմն թվում էր, թե, հերթական ճոճքի ժամանակ մի կողմ թեքվելով, նավն այնքան կշրջվի, որ այլևս չի կարողանա բարձրանալ: Կխորտակվի:

Մի կերպ հասավ մոր նավասենյակ: Դուռը բացեց, ներս մտավ ու աչքերի առջև բացված տեսարանից չկարողացավ ծիծաղը զսպել: Տիկին Ռիման խորը քնած էր: Ճոճվող նավը նրա մարմինը լայն մահճակալի վրա գլանաձև լիսեռի պես կողքից կողք էր գլորում, ու նրա «հեչ վեջն էլ չէր», թե ծովը փոթորկվում է, ու նավն էլ քիչ է մնում խորտակվի:

Նստեց մահճակալի կողքի բազկաթոռին ու ժպիտով հետևում էր, թե տիկին Ռիման ինչպես է գլորվում կողքից կողք ու չի արթնանում:

Երկու ժամ անց փոթորիկը սկսեց հանդարտվել: Նավի ճոճքը դանդաղեց, ճոճքի ամպլիտուդն էլ փոքրացավ: Ճիշտ է, ծովն առաջվա պես ալիքվում էր, բայց ալիքներն այլևս առաջվա ուժով չէին հարվածում նավակողերին:

Առավոտյան նախաճաշին նավի անձնակազմից տեղեկացան, որ գիշերը ծովում ուժեղ փոթորիկ է եղել: Այս կողմերում փոթորիկները, իհարկե, հազվադեպ երևույթ չէին, բայց գիշերվա ուժգին ալեկոծությունը փորձառու նավապետին ստիպել էր ճոճքը մեղմելու համար նույնիսկ փոխել երթուղին, ու նավը շեղվել էր իր նախնական ուղղությունից:

Որդու «ո՞նց քնեցիր» հարցին ի պատասխան՝ տիկին Ռիման ասաց, որ գիշերը լավ քնել էր, միայն թե քնի մեջ թվացել էր, թե գլուխը պտտվում է: Այդպես էլ չէր հասկացել՝ երազո՞ւմ, թե՞ արթմնի: Ասաց ու նայեց ծովին:

Արևի տակ շլացուցիչ լույսով փայլում էր ծովը: Փրփրաբաշ ալիքները մերթ կամաց հեռանում էին նավից՝ հեռուներ տանելով սպիտակ փրփուրները, մերթ աղմուկով զարկվում էին նավակողերին՝ ցրելով մարգարտանման բյուրավոր շիթեր: Արևի ճառագայթների տակ դրանք հեռվից կարծես սադափագույն ուլունքներ լինեին, որ առատորեն շաղ էին տվել ծովի հարթ մակերևույթին:

Կենսագրություն

Ռիմա Խաչատրյան (ապրիլի 3, 1938 - ապրիլի 10, 2020), ՀՀ վաստակավոր մանկավարժ, կրթության նորարար[1], բժշկական քոլեջների ուսանողների համար նախատեսված դասագրքերի հեղինակ, միջնակարգ բժշկական կրթության կազմակերպիչ, արհմիութենական գործիչ, Մասնագիտական վերապատրաստման և կատարելագործման ինստիտուտի հիմնադիրը:

20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի առավել նշանակալի մանկավարժական գործիչներից է: Նրա ջանքերն ուղղված էին Հայաստանում միջնակարգ բժշկական կրթության համակարգի բարեփոխմանը, մասնագիտական վերապատրաստման և կատարելագործման համակարգերի ներդրմանն ու զարգացմանը:

Նա առաջարկեց արդյունքի ձևավորմանը միտված նոր մանկավարժական մեթոդ՝ *Չառաջադիմող ուսանողների հաջողության բանաձևը*: Արժանապատվության, ճշմարտախոհության, արդարամտության, ազատության ու պատասխանատվության վրա խարսխված այս յուրօրինակ մեթոդաբանությունը նպատակաուղղված էր կրթական փորձի վերափոխմանը:

1990-ականներին այն մեծ ռեզոնանս առաջացրեց մանկավարժական հանրության շրջանում՝ մեծապես խթանելով հետխորհրդային կրթական բարեփոխումները նորանկախ Հայաստանում:

Ռիմա Խաչատրյանի ջանքերով 1970-2015 թթ. մեկ տասնյակ բժշկական քոլեջներ բացվեցին Հայաստանի տարբեր շրջաններում, գործող կլինիկաներին կից հիմնվեցին բուժքույրական երկու դպրոցներ Երևանում:

[1] Տես Tert.am, հոկտեմբերի 6, 2021

Հեղինակ է բժշկական քոլեջների ուսանողների համար նախատեսված երկու դասագրքերի («Անօրգանական քիմիա» (երկիատորյա) և «Անալիտիկ քիմիա»), որոնք արդեն մեկուկես տասնամյակ որպես հիմնական դասագիրք կիրառվում են Հայաստանի մեկ տասնյակ բժշկական քոլեջներում:

Ռիմա Խաչատրյանը նաև արհմիութենական գործունեություն է ծավալել: Մանկավարժական համալսարանն ավարտելուց հետո բազմաթիվ պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել արհմիութենական կազմակերպություններում, եղել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի խորհրդի անդամ:

Հայաստանի կառավարությունը բարձր է գնահատել Ռիմա Խաչատրյանի վաստակը մանկավարժության և միջնակարգ բժշկական կրթության զարգացման գործում: 2017-ին նրան շնորհվել է ՀՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում[2]: Պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով (2008), ՀՀ վարչապետի հուշամեդալով (2018), ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալով (2005), բազմաթիվ պատվոգրերով ու շնորհակալագրերով: Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության 1984-ի մարտի 22-ի Ե-1378 հրամանագրով պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով[3], Արհմիությունների համընդհանուր կոնֆեդերացիայի հուշամեդալով (2017):

Մասնագիտական վերապատրաստման և կատարելագործման ինստիտուտը 2020 թվականին անվանվել է Ռիմա Խաչատրյանի անունով:

---

[2] Ռիմա Խաչատրյանին ՀՀ վաստակավոր մանկավարժի կոչում շնորհվել է ՀՀ նախագահի՝ 2017 թ. մայիսի 17-ի Ն ՆՀ-388-Ա հրամանագրով:

[3] «Աշխատանքի վետերան» մեդալը սահմանվել է ԽՍՀՄ ԳԽ նախագահության 1974 թ. հունվարի 18-ի հրամանագրով: Այն շնորհվում էր ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերում, գիտության, մշակույթի, կրթության, առողջապահության բնագավառներում, պետական հիմնարկներում ու հասարակական կազմակերպություններում երկարամյա բարեխիղճ աշխատանքի համար:

Կենսագրությունը

Ծնվել է 1938 թվականի ապրիլի 3-ին Երևանում՝ Վանից (մայրը) և Ալաշ-կերտից (հայրը) ներգաղթյալների ընտանիքում: Ծնողները ծանոթացել էին Ալեքսանդրապոլի ամերիկյան որբանոցում:

Մայրական պապը՝ Վանի նահանգի Հայոց ձորի գավառի Անգղ գյուղի Սբ Աստվածածին վանքի քահանա, միաժամանակ, տեղի ծխական դպրոցի ուսուցչապետ Տեր Գևորգը, 1915-ի Ցեղասպանությունից մազապուրծ գաղթել է Միացյալ Նահանգներ, որտեղ 1924-ին զոհվել է ավտովթարից:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1961-ին՝ որպես տեխնիկ-նորմավորող: 1965-ի սեպտեմբերի 1-ից մինչև իր կյանքի վերջը (55 տարի անընդմեջ) աշխատել է Երևանի հենակետային բժշկական քոլեջում (մինչև 1991 թվականը՝ Երևանի № 1 պետական բազային բժշկական ուսումնարան):

Շատ է ճանապարհորդել, հատկապես կյանքի վերջին երկու տասնամյակում: Այցելել է 38 պետություն և 52 քաղաք: Եղել է ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Հնդկաստանում, Իսրայելում, Մեծ Բրիտանիայում, Սկանդինավյան, Եվրամիության և ԱՊՀ անդամ երկրներում:

Ամուսնացած էր, ուներ երկու զավակ:

Կյանքից հեռացել է 2020 թվականի ապրիլի 10-ին:

Կրթությունը

Միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի Ստեփան Շահումյանի անվան միջնակարգ դպրոցում:

1955-ին ընդունվել և 1960-ին ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտը՝ ստանալով բնագիտության, քիմիայի և գյուղատնտեսության հիմունքների դասատուի որակավորում:

1962-1965 թթ. հաճախել է Հայկական պետական գյուղատնտեսական ինստիտուտ: 1969-ին ավարտել է Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտին կից միջնակարգ մասնագիտական կրթության դասատուների որակի բարձրացման ֆակուլտետը՝ «Քիմիա» մասնագիտությամբ:

2013-ին մասնակցել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմակերպած՝ «Արդյունքի ձևավորմանը միտված ուսումնական ծրագրերով ուսումնառության կազմակերպում և իրականացում» թեմայով վերապատրաստման դասընթացներին: Ռիմա Խաչատրյանի ղեկավարությամբ մշակվել և Հայաստանի բժշկական քոլեջներում ներդրվել է «Դեղագործություն» մասնագիտության նորացված կրթական ծրագիրը:

Մանկավարժական գործունեությունը

1965 թվականից անալիտիկ, անօրգանական, օրգանական և դեղագործական քիմիա առարկաներն է դասավանդել Երևանի հենակետային բժշկական քոլեջում (նախկինում՝ Երևանի № 1 պետական բազային բժշկական ուսումնարան): 2002-2014 թթ. եղել է քոլեջի դեղագործության ամբիոնի վարիչը:

1984-ին երկար տարիների բարեխիղճ աշխատանքի համար ՀԽՍՀ ԳԽ Նախագահության հրամանագրով պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով:

Համամիութենական սոցիալիստական մրցության[4] արդյունքով արձանագրած բացառիկ նվաճումների համար 1987-ին արժանացել է ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ մինիստրների խորհրդի, ՀԱՄԿԽ-ի[5] և ՀամԼԿԵՄ Կենտկոմի պատվոգրի:

ՀՀ նախագահի հրամանագրով 2017-ին Ռիմա Խաչատրյանին շնորհվել է ՀՀ վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում:

---

[4] Համամիութենական սոցիալիստական մրցություն, աշխատանքի արտադրողականության մրցություն ձեռնարկությունների, արտադրամասերի, բրիգադների, անհատ բանվորների, ուսումնական հաստատությունների միջև:

[5] ՀԱՄԿԽ - Համամիութենական արհեստակցական միությունների կենտրոնական խորհուրդ, արհմիությունների համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում արհմիությունների գործունեությունը ղեկավարող մարմին ԽՍՀՄ-ում:

Միջնակարգ բժշկական կրթության կազմակերպումը

Գործուն մասնակցություն է ունեցել բժշկական ուսումնարանների հանրապետական ցանցի ընդլայնմանը: Հեղինակ է բժշկական քոլեջների «Դեղագործական գործ» մասնագիտությամբ ուսանողների համար նախատեսված «Անօրգանական քիմիա» (երկհատորյա) և «Անալիտիկ քիմիա» դասագրքերի:

Միջնակարգ բժշկական կրթության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի, բազմամյա ծառայության և աշխատանքային գնահատելի հաջողությունների համար 2002-ին պարգևատրվել է ՀՀ առողջապահության նախարարության պատվոգրով, 2005-ին՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության հուշամեդալով:

2009-ին ՀՀ նախագահի հրամանագրով միջնակարգ բժշկական կրթության համակարգի զարգացման գործում նշանակալի ավանդի համար Ռիմա Խաչատրյանը պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով:

Դասագրքերը

«Անօրգանական քիմիա», ուսումնական ձեռնարկ բժշկական քոլեջների ուսանողների համար, մաս I, «Լաքի փրինթ» հրատարակչություն, Երևան, 2007

«Անօրգանական քիմիա», ուսումնական ձեռնարկ բժշկական քոլեջների ուսանողների համար, մաս II, «Լաքի փրինթ» հրատարակչություն, Երևան, 2007

«Անալիտիկ քիմիա», ուսումնական ձեռնարկ բժշկական քոլեջների ուսանողների համար, «Լեգալ պլյուս» հրատարակչություն, Երևան, 2009

Երևանի հենակետային բժշկական քոլեջի գիտամեթոդական կաբինետը դասագրքերն ընդգրկել է Հայաստանի պետական բժշկական քոլեջների ուսումնական ծրագրերի մեջ, որպես հիմնական ուսումնական ձեռնարկներ:

Արիմիութենական գործունեությունը

1969 թվականին ընտրվել է Երևանի № 1 պետական բազային բժշկական ուսումնարանի արիմիության (5000 անդամ) նախագահ: 2001-ին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արիկոմը վերակազմավորվել է Երևանի հենակետային բժշկական քոլեջի արհեստակցական կազմակերպության, որն էլ Ռիմա Խաչատրյանը ղեկավարել է մինչև իր կյանքի վերջը:

1981-1989 թթ.եղել է բուժաշխատողների արիմիության Մյասնիկյանի շրջանային կոմիտեի փոխնախագահը (1984-1986 թթ.՝ նախագահը): 1980-ից Հայաստանի բուժաշխատողների արիմիության հանրապետական կոմիտեի, ապա առողջապահության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միության խորհրդի անդամ էր:

1992-1994 թթ. առաջին անգամ Երևանի բազային բժշկական ուսումնարանում կիրառել է «արիմիության գանձարանը՝ փոխօգնության դրամարկղ» սկզբունքը, երբ յուրաքանչյուր ամիս հավաքված անդամավճարներն ամբողջությամբ բաշխվում էին այն ուսանողների ու աշխատակիցների միջև, որոնց ընտանիքներում արցախյան պատերազմի մասնակից կար:

1990-ականներին հետևողականորեն հանդես է եկել բուժքույրական գործի իրավական կարգավորման օգտին և էապես նպաստել է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի ընդունմանը: Նրա ակտիվ դերակատարմամբ 1996-ին ընդունված օրենքում առաջին անգամ արծարծվեցին միջին բուժանձնակազմի աշխատանքային ծանրաբեռնվածության գնահատման ու աշխատանքի արդար վարձատրության ապահովման հիմնահարցերը:

Արիմիությունների համընդհանուր կոնֆեդերացիայի գործադիր կոմիտեի 2017-ի հունիսի 21-ի որոշմամբ պարգևատրվել է Արիմիությունների համընդհանուր կոնֆեդերացիայի հուշամեդալով:

Պարգևատրվել է նաև ԽՍՀՄ արհմիությունների համամիութենական խորհրդի (1987), Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (2008) պատվոգրերով, բազմաթիվ շնորհակալագրերով:

Գրքում հիշատակված անձինք

Անդերսեն Հանս Քրիստիան (1805–1875), դանիացի գրող և բանաստեղծ: Համաշխարհային ճանաչման ու հռչակի է արժանացել իր հեքիաթների շնորհիվ, որոնք թարգմանվել են 125 լեզուներով:

Գանդի Ինդիրա (1917–1984), հնդիկ քաղաքական և պետական գործիչ, Հնդկաստանի երրորդ վարչապետը (1966–1977 և 1980–1984)

Գառզու Ժան, Գառնիկ Զուլումյան (1907–2000), ֆրանսահայ նշանավոր նկարիչ, բեմանկարիչ, ֆիգուրատիվ արվեստի վարպետ

Դեմիրճյան Կարեն Սերոբի (1932–1999), հայ քաղաքական և պետական գործիչ, ՀԿԿ ԿԿ 1-ին քարտուղար (1974–1988), ՀՀ ԱԺ նախագահ (1999), ՀՀ ազգային հերոս (1999, հետմահու)

Զեյդլ Էմանուել ֆոն (1856–1919), վաղ մոդեռնիզմի ժամանակաշրջանի գերմանացի ճարտարապետ, շինարար: Հայտնի է ինտերիերների յուրօրինակ նախագծերով:

Թամանյան Ալեքսանդր Հովհաննեսի (1878–1936), հայ ճարտարապետ, ճարտարապետության ակադեմիկոս (1914), ՀԽՍՀ ժողովրդական ճարտարապետ (1926)

Իսաբեկյան Էդուարդ Հմայակի (1914–2007), հայ նկարիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1956), ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ (1963)

Լենին (Ուլյանով) Վլադիմիր Իլյիչ (1870–1924), ռուս հայտնի հեղափոխական, քաղաքական գործիչ, քաղաքական տեսաբան, Խորհրդային Միության հիմնադիրն ու առաջին ղեկավարը (1917–1924)

Խանզադյան Սերո Նիկոլայի (1915–1998), հայ գրող, արձակագիր, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ (1974), ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր (1977), Սոցիալիստական աշխատանքի հերոս (1985), Երևանի պատվավոր քաղաքացի

Խորենյան Վահան Սուրենի (1928–2003), հայ գեղանկարիչ

Հովսեփյան Վաչե Արտաշեսի (1925–1978), հայ դուդուկահար, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1977)

Ղարիբյան Բորիս Երվանդի (1931–1982), խորհրդահայ մտավորական, Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրենը (1975–1982)

Մաքսիմիլիան I Ջոզեֆ (1756–1825), Բավարիայի թագավորը (1806–1825): 1777-ին Մաքսիմիլիանը դարձավ ֆրանսիական բանակի գնդապետ, ապա գեներալ-մայոր: Մասնակցել է Ֆրանսիական հեղափոխության պատերազմների սկզբնական փուլին:

Մուրադյան Սարգիս Մամբրեի (1927–2007), հայ նկարիչ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ (1978), ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1972)

Նիկոլայ 1-ին (1796–1855), Ռուսաստանի կայսր, Ռոմանովների հարըստության ներկայացուցիչ: Նրա օրոք Գյումրին ամրացվեց՝ դառնալով Անդրկովկասում ռուսական ամենահզոր ամրություններից մեկը: 1837 թ., Նիկոլայ 1-ինի այցելությունից հետո, Գյումրին վերածվեց բերդ-ամրոցի, ապա նրա կնոջ՝ Ալեքսանդրայի անունով կոչվեց Ալեքսանդրապոլ:

Չերչիլ Ուինսթոն (1874–1965), բրիտանացի պետական գործիչ, հռետոր և լրագրող: Որպես վարչապետ (1940–1945, 1951–1955) բրիտանացի ժողովրդին համախմբել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Գրականության Նոբելյան մրցանակի դափնեկիր (1953):

Ջահան շահ (1592–1666), Մեծ մողոլների կայսրության տիրակալը (1627–1658): Նրա օրոք են կառուցվել Թաջ Մահալը, Կարմիր ամրոցը, Տաճարային մզկիթը:

Սահյան Համո, Հմայակ Սահակի Գրիգորյան (1914–1993), հայ բանաստեղծ, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր (1975)

Սաֆրոնով Եվգենի Իվանի (1946–2009), նկարիչ, բեմանկարիչ, Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի գլխավոր նկարիչ (1980- 2009), ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր (1981)

Սիմեոն Ա Երևանցի (1710–1780), Ամենայն Հայոց կաթողիկոս (1763–1780), 18-րդ դարի հայ ականավոր աստվածաբան, մատենագիր, մշակութային և քաղաքական գործիչ

Վորոշիլով Կլիմենտ Եֆրեմովիչ (1881–1969), խորհրդային պետական, կուսակցական և ռազմական գործիչ, բոլշևիկ, Խորհրդային Միության կրկնակի հերոս (1956, 1968), Խորհրդային Միության մարշալ (1935), ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահ (1953–1960): Էական դերակատարում է ունեցել Կարմիր բանակի «զտման» գործում (1936–1938):

Օջալան Աբդուլլահ (ծնվ. 04.04.1948), քուրդ հեղափոխական և քաղաքական գործիչ, Քրդական աշխատավորական կուսակցության հիմնադիրն ու առաջին ղեկավարը: Թուրքիայում դատապարտված է ցմահ ազատազրկման: 1999 թվականից բանտարկված է Էմրալի կղզում:

Գրքում հիշատակված տեղանուններ

Ագրա, քաղաք Հնդկաստանի հյուսիսում, Ուտար-Պրադեշ նահանգում, Ջամնա գետի (Գանգեսի վտակ) ափին

Աշտարակ, քաղաք Հայաստանում, Արագածոտնի մարզկենտրոնը: Գտնվում է Քասախ գետի ափին:

Արգավանդ (նախկին անվանումը՝ Ուզունոբա), գյուղ Հայաստանի Արմավիրի մարզում, մարզկենտրոնից 9 կմ հարավ-արևելք

Արկտիկա, Երկրի միացյալ ֆիզիկա-աշխարհագրական շրջան, որը կից է Հյուսիսային բևեռին ու ներառում է Եվրասիան, Հյուսիսային Ամերիկան, գրեթե ամբողջ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսն իր կղզիներով (առանց Նորվեգիայի մերձափնյա մասերի), նաև Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների մոտակայքում գտնվող երկրամասերը:

Դաշտ, գյուղ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի տարածաշրջանում

Դաունինգ սթրիթ, փողոց Լոնդոնում: Դաունինգ սթրիթ 10 հասցեում է գտնվում Մեծ Բրիտանիայի վարչապետի նստավայրը:

Թիֆլիս, Վրաստանի մայրաքաղաքի անվանումը Ռուսական կայսրության կազմում

Լենինական, Գյումրի քաղաքի անվանումը 1924–1990 թթ.

Լեոբեն, քաղաք Ավստրիայի կենտրոնական մասում, Շտիրիա նահանգում, Մուր գետի ափին

Լոնդոն, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի միացյալ թագավորության մայրաքաղաքը

Խոյ, քաղաք Իրանի հյուսիս-արևմուտքում, Ուրմիա լճից դեպի հյուսիս, Խոյի այգեվետ և բարեբեր դաշտում: Նախկինում Խոյը եղել է Պարսկահայքի գլխավոր քաղաքներից մեկը: Հիշատակվում է իբրև բերդ, ավան, բերդաքաղաք, քաղաք:

ԽՍՀՄ, Խորհրդային Միություն, դաշնային սոցիալիստական պետություն Եվրասիայում: Կազմավորվել է 1922-ի դեկտեմբերի 30-ին և կազմալուծվել 1991-ի դեկտեմբերի 26-ին:

Կառլսպլաց (Շտախուս), հրապարակ Բավարիայի (Գերմանիա) մայրաքաղաք Մյունխենի կենտրոնում, քաղաքի կարևորագույն տրանսպորտային հանգույցներից մեկը

Կարչև, քաղաք Լեհաստանում, Վարշավայի քաղաքային ագլոմերացիայի կազմում

Կիրովական, Վանաձոր քաղաքի անվանումը 1935-1992 թթ.

Կոպենհագեն, Դանիայի Թագավորության մայրաքաղաքը

Կոստանդնուպոլիս, **Ստամբուլ**, քաղաք Թուրքիայում: Եղել է Հռոմեական կայսրության (330-395), Բյուզանդիայի (395-1204 և 1261-1453), Լատինական կայսրության (1204-1261), ապա Օսմանյան կայսրության (1453-1922) մայրաքաղաքը:

Կրասնոդար, քաղաք ՌԴ հարավում, Կուբան գետի ափին, Կրասնոդարի երկրամասի վարչական կենտրոնը

Հարավսլավիա, պետություն Բալկանյան թերակղզու հյուսիս-արևմտյան մասում: Գոյություն է ունեցել 1918-2003 թթ. (ընդմիջումներով):

Հյուսիսային ծով, Ատլանտյան օվկիանոսի ծայրամասային ծով Սկանդինավյան ու Յուտլանդական թերակղզիների (արևելքում) և Մեծ Բրիտանիա, Օրկենյան ու Շոտլանդական կղզիների (արևմուտքում) միջև

Մալիբու, քաղաք ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի Լոս Անջելեսի շրջանի արևմուտքում: Մալիբուն Չումաշ (ամերիկյան հնդկացիներ) ցեղի տարածքների մի մասն էր: Հնդկացիներն այդ վայրն անվանել էին «Հումալիվո»: 20-րդ դարի սկզբին հոլիվուդյան աստղերն այստեղ սկսեցին կառուցել ամառանոցներ ու դղյակներ, որոնցից առավել հայտնի է Մալիբուի դղյակը:

Մյասնիկյանի շրջան, Երևան քաղաքի ութ նախկին վարչական շրջաններից մեկը

Մյունխեն, քաղաք Գերմանիայում, Բավարիայի դաշնային երկրամասի մայրաքաղաքը

Մոնմարտր, Փարիզի հյուսիսում գտնվող 130-մետրանոց բլրի և հին հռոմեական բնակավայրի անվանումը: 1860-ին դարձել է Փարիզի մի մասը՝ իր անվանումը տալով քաղաքային 18-րդ շրջանին:

Նյու Դելի, Հնդկաստանի մայրաքաղաքը, Դելի ագլոմերացիայի կենտրոնը: Քաղաքը Դելիի միութենական տարածքների ինը շրջաններից մեկն է:

Նոյհաուզեր շտրասսե (Neuhauser Strasse), Մյունխենի հին քաղաքի առաջին և ամենամեծ հետիոտնային գոտին: Այստեղ կան բազմաթիվ խանութներ և ռեստորաններ:

Շվիդեր, նախկինում անկախ քաղաք Լեհաստանում: Այժմ Օտվոցկի մաս է կազմում: Գտնվում է նույնանուն գետի ափին:

Շտիրիա, Ավստրիայի ինը նահանգներից մեկը: Գտնվում է երկրի հարավ-արևելյան մասում:

Ոսկեվազ, համայնք (նախկինում գյուղ) ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանում, Քասախ գետի աջ կողմում

Չանակյապուրի (Chanakyapuri), դիվանագիտական անկլավ, Նյու Դելիի թաղամասերից մեկը: Հիմնադրվել է 1950-ին: Այստեղ է գտնվում Հնդկաստանում օտարերկրյա դեսպանատների մեծ մասը:

Չեխոսլովակիա, պետություն Կենտրոնական Եվրոպայում: Գոյություն է ունեցել 1918-1939 և 1945-1992 թթ.:

Սալմաստ, քաղաք Իրանում, Ուրմիա լճի հյուսիս-արևմտյան ափի մոտ

Սիրենևի բուլվար (Сиреньевый бульвар), Մոսկվայի արևելյան վարչական օկրուգի կենտրոնական մայրուղիներից մեկն է: Սկիզբ է առնում Շչոլկովսկոյի շոսեից և ձգվում արևմուտքից արևելք:

Սկանդինավիա, Եվրոպայի հյուսիսում գտնվող պատմամշակութային տարածք, որի կենտրոնը Սկանդինավյան թերակղզին է

Սոչի, առողջարանային քաղաք ՌԴ Կրասնոդարի երկրամասում, Սև ծովի ափին: Ռուսաստանի ամենամեծ հանգստավայրային քաղաքն է, կարևոր տրանսպորտային հանգույց, Ռուսաստանի սևծովյան ափի խոշորագույն տնտեսական և մշակութային կենտրոնը:

Վարշավա, Լեհաստանի մայրաքաղաքը, քաղաքական, տնտեսական, մշակութային և գիտական կենտրոն

Վեսթմինսթեր, Լոնդոնի պատմական շրջան, Լոնդոնի կոմսության համանուն մայրաքաղաքային շրջանի մասը: Գտնվում է Թեմզա գետի ձախ ափին՝ Սիթիից արևմուտք: Հիմնադրվել է 7-րդ դարում, այդտեղ եղած վանքի շուրջը:

Վիսլա, ամենաերկար գետը Լեհաստանում՝ 1047 կմ. այս ցուցանիշով առաջին տեղն է գրավում Բալթիկ ծովի ավազանում և 9-րդը՝ Եվրոպայում:

Վերին Խաթունարխ (Ակնաշեն գյուղի նախկին անվանումը), գյուղ ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի տարածաշրջանում

Փարաքար, գյուղ ՀՀ Արմավիրի մարզում, Վաղարշապատի տարածաշրջանում

Օսլո, Նորվեգիայի թագավորության մայրաքաղաքը

Օտվոցկ, քաղաք Լեհաստանում, Մազովեցյան վոևոդությունում: Մտնում է Վարշավայի քաղաքային ագլոմերացիայի մեջ: